891.9
Ն-63

ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԴՐԱԽՏԻ ԱՐՔԱՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 821.19-31 Ներսիսյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Ն 633

Ներսիսյան Արշակ
Ն 633 Դրախտի արքան/ Ա. Ներսիսյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2025, 102 էջ:

Վիպակում յուրօրինակ գեղարվեստական հնարանքով պատմվում են Դրախտի երկրում՝ հայկական հնագույն թագավորությունում, ծավալվող իրադարձությունները՝ հիմքում ունենալով Հայկի և Բելի մասին հերոսապատումը:

Բարու և չարի հակասությունը, որին հաջորդում է պատերազմը, բացահայտվում է իմաստասիրական նոր մոտեցումներով, աշխարհընկալման ինքնօրինակ դրսևորումներով, որոնք արտահայտվում են վիպակի վառ կերպարներում և նրանց երկխոսություններում: Պատերազմները՝ անկախ հաղթանակից, ի վերջո, պարտություն են բերում: Այս տեսանկյունից հեղինակի խոհական – փիլիսոփայական քննդհանրացումներն ունեն արդիական հնչեղություն: Վիպակը հեղինակի երկրորդ ստեղծագործությունն է: Ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ և նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

Ա3898
ՀՕՏԱՆԻ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՊԻՏԻԹԱՐ ՍԵՓԱՍՏԱՑԻ
Կրթական Համալիր

ISBN 978-5-8084-2717-4

ՀՏԴ 821.19-31 Ներսիսյան
ԳՄԴ 84(5Հ)-44

© ԵՊՀ հրատ., 2025
© Ներսիսյան Արշակ, 2025

ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ «ԴՐԱԽՏԻ ԱՐՔԱՆ» ՎԻՊԱԿԸ ԿԱՄ «ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼԸ»՝ ՆՈՐՈՎԻ

Հին բանահյուսական և առասպելավիպական նյութերի գրական մշակումը կամ նրանց հիման վրա գեղարվեստական նոր երկ գրելը դյուրին գործ չէ, և միշտ չէ, որ պսակվում է հաջողությամբ: ԱնՀաջող են, մանավանդ, այն դեպքերը, երբ սեփական ասելիք չունեցող հեղինակը մնում է նյութի մակերեսին, վերապատմում է կամ նկարագրորեն ներկայացնում է հայտնի դիպաշարը՝ առանց ստեղծագործելու: Եվ համաշխարհային գրականության պատմության մեջ հաջողության են հասել այն սակավաթիվ հեղինակները, ովքեր, հզոր դիտողականության շնորհիվ ժողովրդական նյութը նորովի գեղարվեստականացնելով, ավելի արտահայտիչ ու տպավորիչ են դարձրել իրենց ասելիքը՝ ավանդական հնի միջոցով արծարծելով արդիական հիմնահարցեր՝ պահպանելով պատմականությունը:

Այդպիսի վառ ու հզոր անհատականություններ են ժողովրդական նյութի մշակմամբ գլուխգործոցներ ստեղծած ու դրանցով հռչակված Գյոթեն, Պուշկինը, Աբովյանը, Թումանյանը և ուրիշներ: Նրանք հիմնականում երկու եղանակ են որդեգրել, որ հայտնի են երկու իրավ մեծությունների՝ Գյոթեի և Պուշկինի անուններով: Առաջինը ժողովրդական նյութերի մշակումով ստեղծել է բոլորովին նոր երկ՝ ընդգծելով հեղինակային ի՛ր անհատականությունը, ինչպես «Ֆաուստը», երկրորդը հարազատորեն վերապատկերել է ժողովրդական նյութը՝ հավատարմորեն պահպանելով նրա ոգին և էությունը:

Թումանյանը երբեմն հետևել է Գյոթեին՝ ստեղծելով «Թմկաբերդի առումը» պոեմը, «Հազարան բլբուլ» երգախառն անավարտ հեքիաթը և մի շարք բալլադներ, երբեմն էլ հետևել է Պուշկինին՝ ստեղծելով «Սասունցի Դավիթ» պոեմը և բալլադների մի զգալի մաս: Բայց հանճարեղ Թումանյանը երբեմն էլ այս երկու հիմնասկզբունքները միավորելով՝ ստեղծել է իրենը՝ **Թումանյանականը,** որի արդյունքն են «Փարվանան», «Աղավնու վանքը», «Քաջ Նազարը», «Անբուն Կըկուն» և այլն:

Մ. թ. ա. երրորդ հազարամյակում (2490-ական թթ.) կատարված իրադարձություններ պատկերող «Հայկ և Բել» առասպելը, որ V դարում գրառել է Մովսես Խորենացին և VII դարում՝ Սեբեոսը, նույնպես արժանացել է գրական մշակումների, և դրանցից ամենահայտնին հայկական կլասիցիզմի խոշորագույն դեմքի՝ Արսեն Բագրատունու՝ 1834 թ. գրված ու 1858 թ. տպագրված 20 դրվագից և 22,232 տողից կազմված դյուցազներգություն – հերոսապոեմն է: Քրիստոնեական մտածողությամբ Բագրատունու այս երկում ճակատամարտը տեղի է ունենում Վանա լճի վրա. Հայկին օժանդակում են Երկնքի հրեշտակները, Բելին՝ Սանդրամետի դևերն ու սատանաները: Ի վերջո, այստեղ էլ Հայկը երեքթևյան նետով սպանում է Բելին:

Տարբեր դարաշրջաններում դրսևորվում են ժողովրդական նյութի բովանդակային տարբեր ընկալումներ և հեղինակային նպատակադրված իմաստավորումներ: Պարտադիր չէ, որ հեղինակն անպայման բանասեր լինի: Գրական որոշ գրագիտություն և ինքնարտահայտման ձգտում ունեցող մարդիկ

նույնպես գրող – արվեստագետ են դառնում՝ երբեմն էլ նույնիսկ շատ հաջող: Օրինակներ շատ կան, բայց ահա մեր առջև է տնտեսագետ՝ այն էլ գիտական աստիճանով, Արշակ Ներսիսյանի «Դրախտի արքան» ստեղծագործությունը՝ պատմահայր Մովսես Խորենացու գրառած «Հայկ և Բել» առասպելի հիմքով և Հովհ. Միրզա Վանանդեցու «Հայաստան, երկիր դրախտավայր»-ի համաբանությամբ:

Դժվար է այս երկին միանգամից ժանրային ճշգրիտ բնորոշում տալ, որովհետև հեղինակը 21-րդ դարի արվեստագետի դիրքերից է մտել առասպելական վիպաշխարհ, խորացել առասպելական ժամանակների մեր հեռավոր նախնիների մարդկային էության բազմաշերտ ծալքերի մեջ և նրանց կերպավորել արդի մարդու իմացությունների և գեղագիտական ըմբռնումների տեսանկյունից: Խնդիրն այն է, որ առասպելավիպական նույն նյութը կարող է ուսումնասիրվել և արժևորվել թե՛ գիտական և թե՛ գեղարվեստական մոտեցումներով: Պարզունակ թվացող հին աշխարհի պատմական դեպքերի և իրադարձությունների քառսն այսօրվա դիտանկյունով գեղագիտորեն կարգաբերելը, այդ իրականության խոր իմացության ու կենսաճանաչողական հարաբերությունների, հին աշխարհի մարդկանց հավատալիքների, կրոնական ըմբռնումների խոր իմացության հետ միասին պահանջում է գրական երկի «ճարտարապետություն»՝ կառույցի և հյուսվածքի, դիպաշարի հաջորդակարգության, գործողությունների զարգացման ընթացքի՝ նրանց պատճառահետևանքային կապերի բացահայտմամբ, կերպարային համակարգի և պատմական կամ առասպելական հերոսներից

այսօրվա իմաստով գրական կերպար ստեղծելու և նրանց՝ որպես առասպելավիպական դարաշրջանում ու միջավայրում հնարավոր ու հավաստի, միս ու արյունից բաղադրված մարդկային կենդանի բնավորություններ իրական գործողությունների մեջ ցուցադրելու որոշակի հմտություններ և, որ անչափ կարևոր է, պատկերավոր լեզվամտածողություն, գրական բարձր ճաշակ ու գրագիտություն:

Բարեբախտաբար, Արշակ Ներսիսյանն օժտված է նշված բոլոր հատկանիշներով, և սրա շնորհիվ էլ նրա ստեղծագործությունը ձեռք է բերել գեղարվեստական երկին անհրաժեշտ որակական արժանիքներ, որոնք այն տարբերում են պատմագիտական աշխատություններից. վերջիններիս գլխավոր արժանիքը հենց գիտականությունն է: Կարևորն այն է, որ այս դեպքում հեղինակին հաջողվել է ստեղծել պատմաառասպելական դարաշրջանի համընդգրկուն գեղարվեստական պատկեր, որում ներկայացված են կենսականորեն հավաստի վիպական կամ հորինածո հավանական հերոսներ:

Առասպելներն ու էպոսները մարդկության մանկության շրջանի ծնունդ են և ստեղծվել են դիցաբանական մտածողությամբ: Այդ շրջանի գեղարվեստական մտածողությունը առասպելական-վիպական հերոսներին կերպավորում էր հատկանիշների բևեռացումով և մարդկային դրական գծերը մեկի և ժխտական հատկանիշները մյուսի մեջ խտացնելով ու նրանց հակադրելով: Սա էլ դառնում էր այդ հերոսների հակամարտության ու բախման հիմքը: Սակայն քաղաքակրթության զարգացման ընթացքին զուգահեռ գեղարվեստական մտածողության զարգացումն աստիճանաբար հանգեցրել է

կերպավորման արվեստի ավելի բարդ ու նրբավորված դրսևորումների, որով միագիծ կերպավորումն այլևս անցած շրջափուլ է: Դա թուլացնում էր առասպելական հերոսների գեղարվեստական համոզչությունը: Այս պատճառով էլ ներկայում՝ աշխարհի գիտական ճանաչողության պայմաններում, նոր առասպելներ և էպոսներ չեն ստեղծվում, որովհետև դիցաբանական հրաշապատում տարրերն այլևս ներգործուն չեն և հավատ չեն ներշնչում: Նույնիսկ V դարում իր «Հայոց պատմության» սկզբնաղբյուրներից մեկը համարող Պատմահայրն էր առասպելներն այսպես բնորոշում. «Այսօր նույնիսկ ծիծաղելի կլինի, եթե մեզնից մեկնումեկը հավատա այս առասպելներում պատմվող դեպքերի իսկությանը, սակայն առասպելներն իրենց մեջ այլաբանորեն ճշմարտությունն են թաքցնում»: Հետագայում Խորենացու գրառած առասպելներին անդրադարձած բոլոր գրողները, այդ թվում և Արշակ Ներսիսյանը, հետամուտ են այդ ճշմարտության գեղարվեստորեն բացահայտմանը:

Բայց վիպաշխարհի ու պատմաառասպելական իրականության շրջանակներում ձևավորված մարդկային ու հասարակական հարաբերություններում, այդ դարաշրջանի մարդկանց ներաշխարհում, հոգեկերտվածքի, զգացմունքների ու խոհերի մեջ կան այսօրվա մարդուն հարազատ ու բնորոշ գծեր, որոնք մեզ կապում են մեր հեռավոր նախնիների հետ: Այդպիսի գծերից են մարդկային փառաբանված առաքինություններն ու մերժված ստորությունները, սերը հարազատների և հայրենիքի, ծնողների, սիրած աղջկա և ընկերների հանդեպ, ոգին ու իմաստնությունը, որոնցով մեր նախնիներն

արժևորել են հայրենիքը, գեղեցիկն ու վսեմը, հավատարմությունն ու նվիրվածությունը, դատապարտել՝ մանավանդ հայրենիքի դավաճանությունն ու նենգությունը, մարդկային մյուս ստոր արատները:

Արշակ Ներսիսյանի երկում սիրո, քաջության ու հայրենասիրության դրսևորումներն առկա են մեր ավանդադիր նախնու՝ Հայկի, նրա նշանակած զորապետ Միհրի ու մյուս ազգանվեր հերոսների կերպարներում:

Համոզված ենք, որ Հայկ նահապետը երկում ներկայացված է որպես լիարժեք ու լիարյուն գեղարվեստական կերպար՝ իր մարդկային բնավորությամբ, իր անունով կոչվելիք Հայաստան աշխարհի դրախտի հանդեպ անսահման սիրո և սիրած աղջկա՝ Աստղիկի հանդեպ նվիրվածության ու զոհաբերության աներկբա պատրաստակամությամբ: Նա դրախտի՝ Հայաստան երկրի տիրակալն է, որ հարևան երկրի արքայի՝ Տիտանյան Բել բռնակալի հետ ունի սուր հակասություններ, ավելի ճիշտ՝ Բելը և մյուսներն իրենք Հայկի հետ ունեին բարդ հակասություններ՝ գրեթե այնպիսիք, ինչպես այսօր Հայաստանի ու մյուս հարևանների միջև դեռևս շարունակվում են:

Այս դեպքում մեզ հետաքրքրում է առնչակից մի այլ խնդիր. ինչպե՞ս են առասպելավիպասքային անձնավորությունները դարձել գեղարվեստական կերպար, և ինչպե՞ս է «Դրախտի արքան» վիպական երկը գեղարվեստորեն արտացոլում վաղնջական ժամանակների իրականությունը:

Երկի վերնագրում հիշատակվող դրախտի երկիրն, անշուշտ, Հայաստանն է, նրա արքան՝ Հայկ նահապետը,

վիպական գործողություններում հանդես բերված մյուս հերոսները՝ Հայկին անմիջաբար առնչակից Արամը՝ արջի հետ մենամարտելու տխուր հետևանքներով, Մաժան քրմապետը՝ իր խոհունակությամբ ու բանիմացությամբ, Հայկը՝ Աստղիկի հանդեպ բուռն սիրո պատկերմամբ, նրա զորական Միհրի ու մյուս վստահելիների, թշնամի Նեբրովթյան Բելի ու նրա հավատարիմ բանագնաց Մուբարակի և մյուս հավատարիմների կերպավորմամբ: Այս ամենով Ա. Ներսիսյանը հյուսել է հեռավոր անցյալի և արդի մեր ազգային ինքնության համար մղվող պայքարի շարունակականությունը գեղարվեստականացնող անհրաժեշտ մի երկ, որով վերստին հավաստվում է, որ էականորեն տարբեր չեն մեր նախնիների՝ ինքնության ու անկախության և այսօրվա հայության մղած ու մղվող գերազնիվ պայքարը:

V դարում պատմահոր գրառած «Հայկ և Բել» առասպելը մեր ժողովրդի պատմական հիշողության հավաստի սկզբնաղբյուրն է: Արշակ Ներսիսյանի գեղարվեստական այս երկը շուրջ հինգհազարամյա մեր պատմության ճակատագրական դրվագներից մեկի նույնական վերապատմումը չէ, այլ գեղարվեստականացրած սեփական ստեղծագործությունը, որտեղ պահպանված են թե՛ իրական – պատմական, թե՛ գեղարվեստական ճշմարտությունը և թե՛ ներկա հայության գլխավոր մտահոգությունները, որ եղել են նաև պատմական անցյալում:

Առհասարակ շարադրանքն աչքի է ընկնում թե՛ հեղինակային խոսքի և թե՛ հերոսների՝ վարպետորեն կառուցված երկխոսությունների, ներքին մենախոսությունների բովանդա-

կալից, հաճախ էլ աֆորիզմի արժեք ունեցող դիպուկ բանաձևումներով, որի մեջ երբեմն ուղղակի է արդիական հնչեղությունը, ինչպես այս մեկում՝ «եթե կռիվդ արդար է, հարյուր հոգով էլ կարող ես հազարների հաղթել»:

Հայոց հնագույն պատմության, աշխարհագրության, տեղանվանագիտության, հնագիտության ու ազգագրության խոր իմացությունը հնարավորություն է տվել հեղինակին ստեղծելու հերոսների գործողության միջավայրի, առասպելական ժամանակների մարդկանց կյանքի ու կենցաղի հնարավորինս ճշգրիտ ու հավաստի պատկեր, որն առավել է դարձնում գեղարվեստական խոսքը:

Որպես գեղարվեստական արժանիք՝ պետք է նշենք նաև, որ հայեցի շարադրանքը փայլում է գրական բարձր գրագիտությամբ, մանավանդ երկխոսությունների և հերոսների ներքին մենախոսությունների հմուտ կառուցումով, որով բացահայտվում է նրանց ներաշխարհը: Անշուշտ, դրանք հեղինակն ինքն է կառուցել ստեղծագործական երևակայությամբ ու պատմագեղարվեստական դասական հեղինակների փորձով, դասական պատմավեպերի, մանավանդ որ պատմական սկզբնաղբյուրները չափազանց ժլատ են իրենց տեղեկատվությամբ:

Ըստ առասպելի՝ Բելի կործանումը նրա մահով չի ավարտվում. Հայկը զմռսել է տալիս նրա մարմինը և դնում մի բարձունքի վրա՝ սերունդներին ի տես՝ որպես իր սխրանքի հիշեցում, որով տապալվել է Բելը՝ որպես չարիքի մարմնավորում:

Ընդհանուր առմամբ՝ Արշակ Ներսիսյանի այս երկը համապատասխանում է առասպելավիպական նյութի տրամաբանությանը, և հեղինակն իրավունք ունի զուտ գաղափարագեղագիտական նկատառումներով շեղումներ կատարելու փաստական նյութից հանուն գեղարվեստական համոզչության և գեղագիտական նպատակադրման իրագործման՝ ստանձնելով դրա պատասխանատվությունը:

Արշակ Ներսիսյանի «Դրատի արքան» ստեղծագործությունը տպագրության արժանի երկ է. նրանով հարստանալու է արդի հայ գեղարվեստական արձակը:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության
պատմության և գրականության տեսության
ամբիոնի պատվավոր վարիչ,
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ
28.05.2025

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԹՌՉՆԱԿՆԵՐԻ ԵՐԱՄԸ

Հեռու լեռների արնաբորբ սրտում՝ կապույտ երկնքի սավանի ներքո, փայլուն արևի շողով պարուրված մի երկիր կար շատ վաղ անցյալում: Այստեղ բնակվող յուրաքանչյուր մարդու սիրտն ու հոգին կառավարում էր հզոր մի արքա: Եվ այդ արքային կոչում էին Հայկ, հսկաների որդի, ժողովրդի հայր ու թշնամու ահ:

Հայկի գլուխը զարդարող ոսկե թագն արեգակի շողից պսպղում էր ու ճառագում՝ որպես արքայական անկոտրում կամքի ցուցադրություն: Նրա խոսքերը ծովի ալիքների նման էին շարվում, հետքեր թողնում ու անհետանում, խոսքն ու լռությունը համադրվում էին երաժշտության պես, իսկ հայացքն ու աչքերն իրենց մեջ կրում էին մթին անդունդի խորությունը, խորհուրդն ու գաղտնիքը:

Թիկնեղ Հայկն անշարժ նստած էր՝ գլուխը բռունցքին հենած, իսկ աչքերը սառել էին մի կողմի անկյունում փռված գորգի վրա: Արքան նստած էր գահին. միայնակ այդ հսկա դահլիճում: Դահլիճի դռները գեղակերտ էին. նմանվում էին դարպասների, երկաթե ջահը՝ տձև ոլորումներով կաղնու ծառ էր հիշեցնում, իսկ սյուները կոպիտ ժայռերի էին նման:

Դրսից խուլ աղմուկ էր խուժում: Արքան հասկացավ, որ ժամանակը մոտ է: Աղմուկն աստիճանաբար սկսում էր ուժեղանալ և գնալով ավելի անտանելի էր դառնում: Երկու զինվոր շքամուտքի դռները հրելով բացեցին: Եվ ահա, դահլիճի մի ծայրից արքային էր մոտենում իշխանների մի ամբողջ

խումբ՝ տոնական հագուկապով ու պսպղուն զարդարանքով: Արքան վեր կացավ ու քայլեց նրանց ընդառաջ: Հայկին մոտենալով՝ խումբը շրջապատեց նրան: Իշխաններն, իրար հերթ չտալով, փորձում էին որսալ արքայի հայացքը՝ նրան ողջույնի խոսքեր հղելու նպատակով, իսկ Հայկը՝ առանց շտապելու սեղմում էր նրանցից յուրաքանչյուրի ձեռքը, ապա, մի քանի խոսք փոխանակելուց հետո, անցնում մյուսին: Հարցերն արդեն սպառվում էին, երբ արքան բոլորին ցույց տվեց պատշգամբն ու առաջնորդեց այդ ուղղությամբ:

Պատշգամբին մոտենալով՝ նա մի պահ կանգ առավ, շունչ քաշեց, բացեց վարագույրն ու դուրս եկավ: Արքայանիստի այգում հավաքված ամբոխի վերջը չէր երևում: Ժողովուրդը հեշտությամբ արգելափակել էր այգու կենտրոնի ուղղանկյուն շատրվանը: Որոշներն անգամ շատրվանի մեջ էին հայտնվել: Արքային տեսնելուն պես հիացմունքի աղաղակ բարձրացավ, շարունակեց ուժեղանալ և հասավ առավելագույնին: Հայկը բարձրացրեց աջ ձեռքը: Կարճ շարունակվելուց հետո աղաղակը նույն արագությամբ սկսեց նվազել ու վերացավ: Արքան տեսավ, թե ինչպես է երկնքում թռչնակների երամ ճախրում: Թռքերն օդով լիցքավորվեցին, և թագավորը դիմեց ժողովրդին.

- Թշնամին սպառնում է մեզ, - արքայի առաջին խոսքերը լսելուն պես բազմությունը սկսեց ավելի բարձր աղաղակել, սակայն խոսքը շարունակվեց, իսկ աղմուկն այդ ընթացքում սկսեց նվազել, - թշնամին մոռացել է մեր ժողովրդի զորությունը և հայտարարում է մեր հողերի սեփականության մասին: Նրանք համարձակվում են զորքով գալ մեզ վրա, բայց

մոռացել են, որ մեր ձայնը հասնում է իրենց թագավորի ապարանք ու սարսափեցնում նրան:

Այս լսելուն պես բազմության մեջ այնպիսի շարժում մտավ, որ արքայանիստ-ամրոցը դղրդաց: Արքան՝ պատշգամբի վրա կանգնած, տեսավ, թե ինչպես է իր ոտքերի տակ փոքրիկ ճաք առաջանում: Երբ աղմուկը նվազեց, նա պտտվեց ու իշխաններին հերթ տալով ներս մտավ:

Իսկ հեռվում՝ մահվանից էլ սև ծովերի ափին, խոնավ կանաչով ժայռերի վրա, ամպրոպ-երկնքի ստվերի ներքո մի երկիր կար, որտեղ արքան էր հսկա Բելը՝ աշխարհի տիրակալն ու երկնքի պատիժը: Նա կանգնած էր ժայռի գլխին, լսում էր քամուն ու զննում հեռուն: Քամին սուլելով աղաղակ բերեց նրա ականջին: Արքան խոժոռված նայեց ամպրոպին ու հոգոց հանեց:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՄԻՇՏ ՊԵՏՔ Է ՓՆՏՐԻ

Անձրևն արդեն դադարել էր, սակայն մռայլ երկինքը պատռող կայծակները չէին սպառվում: Ջրի կաթիլներով մաքրված օդը և՛ թարմացնող էր, և՛ ճնշող: Խորհրդավոր սպասումներ էին թափառում: Բելի ապարանքը լի էր զինվորականներով: Շուրջ երեք տասնյակ հրամանատարներ նստած էին արքայի երկար, ուղղանկյան ձև ունեցող սեղանի շուրջը և նրան էին սպասում: Համազգեստավորների անկանոն քննարկումները երկար կարող էին ձգվել:

Սևազգեստ Բելը սրահի պատշգամբից զինվորականներին էր զննում: Խառնաշփոթ լիցքերը արքայից հեռու էին: Նրա քայլերը հստակ էին, շարժումները՝ վստահ, միտքը՝ մաքուր: Անկանոն քննարկումը պարտվեց, երբ արքան իջավ աստիճաններով ու տեղավորվեց սեղանի ծայրին: Նա միանգամից սկսեց խոսել.

- Պատերազմ է սպասվում, - ուղղեց աթոռը և մեջքը, ապա շարունակեց, - Հայկի երկրի հարավ-արևմտյան հողերը մերն են եղել: Այդտեղ չափազանց բարեբեր է, այդ շրջաններով վարար ջրեր են հոսում: Նրանք հացահատիկ են աճեցնում, հանքերից մետաղներ են հանում ու վաճառում, օգտագործում են անտառների փայտը: Դրանք մեր պապերի հողերն են, սակայն Հայկն այդ տարածքները հետ չի տալիս: Մեր արևելյան ուղղության ճանապարհները Հայկը փակ է պահում ու այդպես էլ չի բացելու: Ամբողջ աշխարհն է դողում մեզնից, իսկ ո՞վ է նա: Մեզ պատերազմ է պետք:

Երբ արքան ավարտեց խոսքը, զորքերի հրամանատարը, ով արդեն ճերմակածներից ամենատարեցն էր ու նստում էր հենց արքայի կողքին, չկարողացավ զսպել մտքերի ընթացքը՝ հասկացավ, որ միակն է, ով չպետք է լռի, ու իր տեղից մի քիչ առաջ քաշվեց.

- Ժողովուրդը հոգնել է պատերազմներից: Երկրին կայունություն է պետք: Մենք շատ երկար ժամանակ է, ինչ պատերազմում ենք: Պատերազմների պատճառով բոլորս ենք հարստություններ վատնում: Այո՛, մենք միշտ հաղթում ենք, մեր բանակը թվաշատ է ու ամենազորեղը, բայց ո՞ւմ են պետք այդքան դիակները, քանզի մեռնողը դու ես, քո որդին կամ եղբայրը: Բոլոր բանակներն են պարտվում, ուստի մի օր էլ մեզ կհաղթեն:

Բելը խոժոռ մի հայացք գցեց ծերունու վրա: Նա երբեք չէր ջանում թաքցնել զգացմունքները: Այդտեղ նստածներից ոչ ոք չէր համարձակվի նման բան ասել, բայց ծերունին, ով մանկուց էր ճանաչում Բելին, միշտ իմաստուն էր և բնավ չէր վախենում հակադրվել: Բելն իրեն չկարողացավ զսպել ու դիմեց բոլորին.

- Մենք պետք է կռվով Հայկին ծնկի բերենք: Նա համարձակվում է չկատարել մեր պահանջները: Մեր զենքերն ավելի ժամանակակից են, իսկ մենք՝ թվաշատ, մեր ռազմիկներն ավելի վարժ են ու պատրաստ, իսկ պատերազմի արնահամը նրանց բերանում է: Աստված մեր կողմից է, ու ես դա շատ լավ գիտեմ, - Բելը խոսեց ավելի խիստ տոնով:

- Բանակը երբեք չի դադարի առաջ գնալ, մինչև որ ժողովուրդը հոգնի պատերազմից, իսկ ժողովուրդն արդեն հոգ-

նել է: Ինչների՞ս է պետք այդքան հող: Ժողովրդին խաղաղություն է պետք, ինչպես անուշ քունն՝ օրվա վերջում, - շարունակեց ծերունին՝ հազիվ բարկությունը զսպելով, - «Ալեկոծված նավը շտապում է դեպի նավահանգիստ, իսկ ժուժկալ մարդն անապատ է փնտրում»[1], - ծերունին ավարտեց խոսքը:

Բելին միանգամից սկսեցին հրեշավոր կասկածներ պատել: Սկզբից արքան հավատաց ծերունուն, սակայն դա երկար չտևեց: Ի՞նչ կար նրա մտքին: Վաղուց նշմարվող կասկածները սկսեցին գլուխ բարձրացնել: Մի՞գուցե ծերունու որդին, ով Բելի լավագույն հրամանատարներից մեկն էր, որոշել է թագակի՞ր դառնալ: Ծերունին Բելի մոր ազգականներից էր: Արքան կասկածում էր, բայց արդյո՞ք դա հնարավոր է: Արքան այլևս ոչինչ չէր ուզում խոսել՝ մոլորվել էր մտքերի խորքում: Նա վեր կացավ ու դիմեց բոլորին. «Ռազմիկը միշտ պետք է փնտրի իր սուրը, ինչպես սեր կորցրած սիրահարն՝ իր սիրտը», - ապա շտապ հեռացավ:

Անձրևն արդեն դադարել էր, սակայն մռայլ երկինքը պատռող կայծակները չէին սպառվում: Ջրի կաթիլներով մաքրված օդը և՛ թարմացնող էր, և՛ ճնշող: Խորհրդավոր սպասումներ էին թափառում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՆԻՔԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ
Կրթական համալիր
ԿՈՎՈՒՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

[1] Տե՛ս Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԿՈՐԱԾ ԻՄԱՍՏ

Ճաշի ժամն էր, իսկ ճաշասենյակը՝ դատարկ: Բազմապիսի ուտեստներով զարդարված սեղանը սպասում էր Հայկին, ով ուշանում էր: Լռության մեջ միայն դրսում թափառող թռչուններն էին լսելի: Արքան ներս մտավ ու տեղավորվեց սեղանի ծայրին: Հայկի մտնելուն պես սենյակը զվարթացավ: Արքայի հետևից շտապելով ներս մտավ պալատական խոհարարը, սեղանին մոտենալով՝ կանգ առավ ու խոնարհվեց.

- Էլի ինչ-որ բան կցանկանայի՞ք ճաշակել, արքա՛:

Հայկը զարմացած խոհարարին նայեց, ապա հայացք գցեց կերակուրներով պայթող սեղանի վրա:

- Կարծու՞մ ես՝ այս ամենն ինձ բավարար չէ:

Խոհարարը շփոթվեց, փորձեց ինչ-որ կերպ շտկել իրավիճակը, սակայն չկարողանալով, պտտվեց ու մի կերպ դուրս փախավ:

- Ամեն անգամ նույն հարցն է տալիս, - մրթմրթաց արքան ու սկսեց փոքր-փոքր պատառները մի կերպ բերանը դնել:

Մի քանի րոպե անց խոհարարի օգնական աղջիկներից մեկը ներս մտավ՝ արքայի ափսեն փոխելու և վերջինիս սպասարկումը շարունակելու: Նա խոնարհվեց արքայի առաջ.

- Ընդամենը մի քանի պատառ կերաք, արքա՛, - մի կերպ համարձակություն հավաքելուց հետո խոսեց աղջիկը:

Արքան ևս մի կում խմեց գինու գավաթից ու, առանց գլուխը վեր բարձրացնելու, պատասխանեց.

- Ինձ գնալով ավելի ու ավելի քիչ բան է սկսել գրավել:

Պալատական աղախինը մի փոքր անհանգստացավ, սակայն փորձեց թաքցնել: Հայկին ամենևին պետք չէր աղջկա աչքերին նայել, որպեսզի հասկանար այդ ամենը:

- Իսկ ինչո՞ւ, - դողդողացող ձայնով խոսեց աղջիկը:

- Ուտելու մասին խոսելը նույնքան ձանձրալի է, որքան ուտելը, - խոսելուց հետո Հայկը կրկին գինի խմեց:

- Ինչպե՞ս կարող է ուտելը ձանձրացնել, - շարունակեց աղջիկը:

- Ամեն ինչ ձանձրալի է դառնում, երբ սկսում ես իմաստ փնտրել:

Այս խոսքերի վրա խոհարարը կրկին ներս մտավ ու նեղողություն խնդրելով՝ ընդհատեց զրույցը.

- Արքա՛, ինչ-որ բան կարո՞ղ եմ ավելացնել:

- Այո՛, կարող ես, - Հայկն այս անգամ կտրուկ խոսեց, ապա խոհարարի հայացքը բռնելով շարունակեց, - իմա՛ստ... կարո՞ղ ես պատրաստել, - խոհարարն ավելի շփոթվեց, իսկ արքան ժպտալով ավարտեց պատվերը - ու մի քիչ էլ գինի:

- Գինի՞, - ի պատասխան արքայի պատվերի՝ ուրախությամբ բացականչեց խոհարարն ու, կարծես, արքայի ձեռքերից պրծնելով վազեց դեպի դուռը:

- Վերջերս խոհերը սկսել են հանգիստ չտալ, - արքան շարունակեց աղջկա հետ տարվող զրույցը:

- Խոհերն անվերջ են ու անհատակ: Կարիք չկա չափից շատ տրվել դրանց, - աղախինը սկսեց ավելի համարձակ խոսել: Արքան մի փոքր զարմացավ աղջկա մտքերի խորությունից ու շարունակեց՝ նրան ուշադիր զննելով:

- Այլևս ոչինչ ինձ չի երջանկացնում: Խոհերին տրվելն է միակ սփոփանքս: Հիմա տխրությանը փոխարինող ոչինչ չեմ կարողանում գտնել:

- Իսկ ժողովո՞րդդ... իսկ լեռնե՞րը, իսկ պալա՞տը, իսկ երկի՞րդ - աղջիկը խոսում էր՝ ինչ-որ անկարևոր գործով զբաղված:

- Ամեն օր դիմում եմ Աստծուն: Նայի՛ր շուրջդ: Ես հարուստ եմ: Անսահման գանձեր, իշխանություն, շքեղություն, սեր ու զորություն: Այն ամենը, ինչ կարելի է երազել, ես ունեմ, սակայն ամբողջը դատարկ է ու անիմաստ՝ ժամանակի անցողիկության հետ: Ոչինչ հավերժ չէ ու ոչինչ ոչ ոքի չի պատկանում: Այս ամենը ցնդելու է ու դառնա ոչինչ: Ինչքան շատ ես ունենում, այնքան ավելի քիչ է սկսում թվալ ունեցածդ:

Կարճ ժամանակ էր անցել, երբ դուռը կրկին բացվեց: Այս անգամ խոհարարը ևս մի աղջկա հետ ներս մտավ: Աղջկա ձեռքին մի մեծ սինի էր՝ ինչ-որ տարօրինակ մրգային ուտեստով, իսկ խոհարարն իր հետ գինի էր բերել: Նրանք ամենը սեղանին շարեցին.

- Ահա՛:

- Ի՞նչ է սա, - զարմացավ արքան:

- «Ի՛մի»: Ճիշտ այնպես, ինչպես կամեցաք՝ չինաց աշխարհի գինով պատրաստված ուտեստ: Նշանակում է իմաստ, - արագ-արագ խոսեց խոհարարը, - անհրաժեշտ է քիչ ուտել, քանի որ կարող է արբեցնել:

Հայկ արքան զարմացած համտեսեց ուտեստը, վեր կացավ տեղից ու մոտեցավ պատուհանին: Նա մի կում էլ գինի խմեց, սառած հայացքով նայեց պարզ-կապույտ երկնքին ու

քթի տակ շշնջաց. «Որոնողը երբեք իմաստ չի գտնի: Իմաստը հեշտությամբ կարելի է շփոթել զվարճացնող գրավչության հետ: Իմաստն այն է, ինչը որոնելու մղումը սկսում է ի հայտ գալ անսպասելի և անավարտ ճանապարհ է բացում թափառողի համար»:

Թագավորը շրջվեց ու գլուխը կախ դուրս եկավ սենյակից, ապա անսպասելի վերադարձավ ու դիմեց խոհարարին.

- Շնորհակալ եմ քեզնից պատրաստածդ ուտեստի համար: Այն համեղ էր և ճիշտ ընտրված անուն ուներ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԹԱՔՆՎԱԾ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայկի որսախումբը պատրաստ էր: Արքայի հետ էր Հայկի եղբոր տղան՝ Արամը: Սա Հայկի եղբոր զավակների անդրանիկն էր, քաջ էր, հպարտ ու վեհ: Արքան սիրում էր որսի դուրս գալ պարզապես նետ ու աղեղով: Նա որսորդ էր, ինչպես իր նախնիները:

Մի քանի ժամ է, ինչ որսախումբը թափառում էր: Ոչ մի կենդանի չէր հանդիպում: Խմբի ձիերը հոգնել էին, խումբը՝ նույնպես: Այն չորս հոգուց էր բաղկացած՝ Հայկը, Արամը և երկու զինված թիկնապահ: Արքան մի քանի հարյուր մետր բոլորից առաջ էր ընկել, նրան հետևում էր Արամը, իսկ ամենավերջում երկու թիկնապահներն էին՝ զրուցելով էին ընկել և դանդաղում էին:

Արքան հետքի վրա էր դուրս եկել. այդ պատճառով էր շտապում: Ցեխի վրա տպվածը եղնիկի կճղակներ ու քայլվածք էին հիշեցնում: Անտառի ծառածածկույթն այնքան էլ խիտ չէր: Ծառերը բավականին հեռու էին միմյանցից: Դրանց արանքով հեշտությամբ կարելի էր ձիավազք կատարել՝ փախչող կենդանիներին հասնելու համար: Հայկը մոռացել էր խմբի մնացած անդամներին: Սովորաբար որսի ընթացքն արքան մյուսներին էր մեկնաբանում, բացատրում, սովորեցնում: Իսկ Արամը հետ էր մնում. նրա ձին հոգնել էր, քանի որ որսի նախորդ օրը տղան ընկերների հետ խաղերով էր տարված և մոռացել էր կենդանուն մի փոքր խնայելու մասին:

Հայկն առաջ էր շարժվում՝ զգալով, որ եղնիկը մոտ է: Հեռվից վարար գետի խշշոցն էր լսվում, իսկ հետքերը գնալով ավելի խորն ու արտահայտիչ էին դառնում: Արդեն պարզ էր, որ կենդանին դեպի գետն է ուղևորվել՝ ջուր խմելու: Գետը, սմբակների խորը հետքերն ու մի քանի կոտրված ճյուղեր Հայկին հուշում էին, որ եղնիկը մոտ է: Մի փոքր էլ, և այն կհայտնվեր տեսադաշտում:

«Հսկա հնգամատ թաթեր: Գորշ արջն է», - Հայկի խոհերը տագնապով ընդհատվեցին: Եղնիկի ու արջի հետքերը սկսում էին խառնվել: Եվս մի քիչ, և արջի հետքերն ուրիշ ուղղությամբ գնացին: «Հաստատ նկատել է մեզ ու հեռացել», - մտածեց Հայկն ու դադարելով գետինը զննել՝ գլուխը բարձրացրեց: Հեռվում՝ գետի ափին, կենդանու ուրվագիծ երևաց: Տեսանելի էր, թե ինչպես է եղնիկը, դեպի գետը կռացած, ջուր խմում: Հայկն սկսեց ձիու ընթացքը դանդաղեցնել, ապա կանգնեցրեց նրան, մեղմ ու անձայն իջավ վրայից, վերցրեց աղեղը, ձգեց ձեռքը, մեջքին ամրացված կապարճից մի նետ քաշեց և առավելագույնս լուռ սկսեց մոտենալ եղնիկին, որը պարբերաբար կռանում էր, ջուր խմում, կրկին բարձրացնում գլուխը, դանդաղ այս ու այն կողմ նայում՝ կարծես անտառին ի ցույց դնելով իր շքեղ եղջյուրները:

Լրիվ անձայն հնարավոր չէր մոտենալ, բայց եղնիկը՝ կասկածելիորեն, այդպես էլ չէր նկատում արքային: Գետի խշշոցն էր, որ չէր մատնում նրան: «Լավ որսորդը նա է, ով շրջահայաց է ու գիտի օգտագործել թաքնված պատահականությունը», - մտածեց արքան ու որոշեց, գետի խշշոցն օգտագործելով, քայլքը վազք դարձնել: Որսորդի ու որսի միջև

հեռավորությունը հարմար էր: Հայկ աղեղնավորն ուղղեց մեջքը, դանդաղ արտաշնչեց, մի քանի վայրկյան նշան բռնեց ու բաց թողեց մատները: Նետը սուլոցով անցավ որսորդին քողարկող ծառերի արանքով ու մխրճվեց եղնիկի պարանոցը: Արքան, ձեռքերը դանդաղ իջեցնելով, հետևում էր, թե ինչպես է որսը տանջվում, իրեն այս ու այն կողմ նետում, փորձում փախչել, սակայն ծնկի է իջնում: Արքան պտտվեց, որպեսզի հասկանա՝ տեսավ արդյոք արքայազնը այն, ինչ կատարվեց հենց նոր:

Արամը՝ իր ձիու վրա, բարձր ու խիտ թփուտների միջով, մեկ այլ ուղղությունից ոգևորությամբ մոտենում էր, երբ պահ մտած արջը դուրս ցատկեց նույն թփուտների միջից, հուժկու հարվածով տապալեց արքայազնի ձիուն ու նրան մի կողմ շպրտեց: Արքան տեսավ, թե ինչպես է տղայի ձին ոտքի կանգնում, ծառս լինում ու փախուստի դիմում: Հայկն անկատ արագությամբ հայտնվեց իր նժույգի թամբին ու հիմա արդեն սիրտը պատռելով մղվում էր դեպի տղան: Մյուս կողմից էլ նույն հապճեպությամբ սլանում էին թիկնապահները: Արջը թաթերով ճզմել էր երիտասարդ ու ազնվակազմ տղային, իսկ վերջինը՝ ինչքան ուժ ուներ, հարվածում էր գիշատչի դնչին:

Տղայի ձեռքը հայտնվեց արջի երախում: Գիշատիչը հսկա թաթը հենեց որսի երեսին ու, խեղճի գլուխը ճզմելով, ձեռքն արմունկից առանձնացրեց: Ոչ ոք երբեք չի հասկանա, թե ինչպես Հայկը թիկնապահներից ավելի արագ հասավ զավակին և ձիու վրայից մի նետ արձակեց արջի թիկունքին, գետնին ցատկելով՝ գոտուն ամրացված հսկա դաշույնը դուրս քա-

շեց, վազեց դեպի գորշ արջն ու խրեց նրա կողոսկրերի արանքը, ապա ետ քաշեց և մտցրեց որովայնը: Որովայնին ուղղված երկրորդ հարվածից հետո արջը հետևի ոտքերի վրա կանգնեց ու փորձեց հարձակվել, սակայն արդեն ուշ էր և կենդանին տապալվեց:

Թիկնապահները, ովքեր վախից կորցրել էին իրենց, տեղ հասան, երբ արջն արդեն անշարժ էր: Նրանք արագ կապեցին անգիտակից տղայի թևը՝ արնահոսությունը դադարեցնելու համար: Արքան երկու ձեռքով սեղմել էր աչքերը և անիծում էր այն պահը, երբ ջուր խմող կենդանու վրա նետ էր արձակել:

Արքայազնի երեսը արջի ճանկերի թողած սպիներով էր զարդարվելու: Արամը քաջ էր, քանզի «քաջերի սերունդը քաջեր է ծնում»[2], իսկ մահից խուսափելն՝ ավելի խոհեմ դարձնում: Օտարները Հայկի երկիրն ու ժողովրդին Արամի անունով պետք է կոչեին Արմենիա:

---

[2] Տե՛ս Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունում:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆԻՐԱԿԱՆ Է ԴԱՐՁՆՈՒՄ

Բելն արթնացավ, երբ դեռ չէր լուսացել: Նա մի քանի րոպե նստեց մահճակալի կողքին, հայացք գցեց երկու կողմում քնած գեղեցկուհիների վրա, ապա վեր կացավ ու ծանր քայլերով մոտեցավ պատուհանին: Երկինքը հենց նոր էր սկսում լուսավորվել:

Արշալույսին Տիտանյան Բելի մտքերը միշտ քաոսային էին ու տձև: Սակայն մի միտք կար, որը չէր դադարում կրկնվել: Բելն արդեն վստահ էր, որ պետք է դեսպան ուղարկել Հայկ արքայի մոտ և պետք է զիջումներ պահանջել: «Եթե ես չանեմ այն, ինչ պետք է անի հզորը, ապա իմ որդիները կպարտվեն, քանի որ տկար թշնամուն ժամանակը կուժեղացնի: Սուրը երկաթի կտոր է դառնում, եթե արյունոտ չէ»: Արքան հետևում էր ամպերի ետևից պայծառացող արևին: Թավշականաչ խալաթը այնպես էր փաթաթված Բելի հսկայածավալ մարմնին, ինչպես կանաչ խոտածածկույթը՝ քարակերտ ժայռին: Մեծամարմին լինելը նրան ծանրաշարժ չէր դարձնում: Հզորացող արևին հետևելը Բելի մտքերն ավելի հեռուն էին տանում, - «Ու՞մ է պետք զորահրամանատարը, ով սկսել է խուսափել պատերազմներից», սկսեց մտածել արքան:

Ճակատագիրը հնարավոր չէ կանխատեսել, ինչքան էլ որ իմաստուն լինես: Եթե բոլոր բանակները պարտվում են, միգուցե Բելինն այն առաջինն է, որը երբեք չի պարտվելու ու գրավելու է ամբողջ աշխարհը: Ամբողջ աշխարհը գրված

բանակն այն առաջինը կլինի, որին ոչ մի երկրորդը չի կարողանա հաղթել, քանի որ այն միակն է: Բելի պատկերացումներն ավելի հեռուն էին գնում: Նա երազում էր միայն համաշխարհային տիրակալություն ստեղծել:

Նման երազները հետևում էին նրան շատ փոքրուց, երբ դեռ մանուկ էր, իր պալատական ընկերների, եղբայրների ու քույրերի հետ խաղում էր հսկա ապարանքի նույնատիպ սենյակներում և բակում: Այդ ժամանակ էլ նա վստահ էր, որ առանձնահատուկ է, քանի որ թագ է կրելու և բարձրանալու է գահին: Բելը բավական երկար է մտորել պատերազմների, խաղաղության ու մարդկանց մասին: Նրա աչքի առաջ արշալույսը փոխարինում էր խավարին՝ այնպես, ինչպես գարունը փոխարինում է ձմռանը, արտաշնչելը հաջորդում է շնչելուն, մահը՝ կյանքին, իսկ խաղաղությանը՝ պատերազմը:

Թագավորը պետք է շատ լավ իմանա, որ խաղաղությունը մի օր ավարտվելու է ու պատրաստվի դրան: Բելը երազում էր ավարտել պատերազմները և երկարատև խաղաղություն նվիրել իր հաջորդներին, սակայն գիտեր, որ այդժամ պատերազմ է պետք: Հսկաների որդի Բելը երազում էր հիշվել մինչև ժամանակների ավարտը՝ որպես արքա, ով և՛ հաղթեց, և՛ խաղաղություն բերեց մարդկությանը:

Երբ արևն արդեն ամբողջովին տեսանելի էր, Բելը դուրս եկավ սենյակից: Նա ուղևորվեց ճաշասենյակ, ապա, ավարտելով նախաճաշը, հրամայեց իր մոտ կանչել բանագնացներին: Կեսօրին մոտ էր, երբ բանագնացներից ամենահմուտը ներս մտավ արքայի ընդունելության դահլիճ, մոտեցավ արքային, խոնարհվեց ու խոսեց.

- Ձեր հրամանով այստեղ եմ:

- Դու նոր առաքելություն ունես, իմ հավատարիմ ընկեր, Մուբարա՛կ - պատասխանեց Բելը, - Ես մի գրություն կպատրաստեմ, որը պետք է հասցնես Դրախտի երկիր՝ Հայկ արքային:

- Ես գիտեի, արքա՛, ու սպասում էի այս օրվան: Հայկի ապարանքում վաղուց է, ինչ չեմ եղել: Կա՞ արդյոք այլ բան, որ կնախընտրեիք փոխանցեի հայոց արքային՝ նրա աչքերի մեջ նայելով:

- Այո՛, քո մտքերը միշտ շարունակում են ինձ: Խնդրում եմ գրության հետ փոխանցել արքային, որ ես կանգ չեմ առնելու, իսկ նա կանգնած է իմ ճանապարհին:

- Արքա՛, վերջերս արքայական պարտեզում հավաք է եղել ու Հայկը դիմել է իր ժողովրդին: Գիտեն, որ պատերազմ է սպասվում:

- Մինչ ինքս մի օր կնայեմ նրա աչքերին, գնա՛ ու փոխանցի՛ր Հայկին իմ խոսքերը: Պատերազմը, որ միշտ անիրական է թվում, սկսվելու է:

Բանագնացն ամբողջ օրը պատրաստվեց, անհրաժեշտ իրեր վերցրեց, հրաժեշտ տվեց կնոջը և մութն ընկնելուն պես՝ դուրս եկավ քաղաքից:

Նույն օրվա կեսգիշերին մոտ՝ դաշույնները գոտկատեղից կապած երեք պալատական զինվոր թակեցին փթթուն ծառերով շրջապատված առանձնատան դուռը: Մի կին ժպտալով բացեց այն: Զինվորներից մեկն արագորեն ձեռքը դրեց կնոջ բերանին ու պինդ սեղմեց, ապա հրեց պատին ու մի շարժումով կտրեց կնոջ կոկորդը, ով փռվեց հատակին, սկսեց

խռխռալ, թպրտալ ու արյունաքամ լինել: Երկրորդ զինվորը ներս մտավ ու վազեց սենյակից դուրս եկող մանկահասակ աղջկա հետևից, իսկ երրորդը բարձրացավ առանձնատան երկրորդ հարկ, մտավ ծերունի զորահրամանատարի որդու ննջասենյակն ու կտրեց քնած զոհի գլուխը:

Առավոտյան ամբողջ ընտանիքը սրի էր քաշված, իսկ ծերունին, ով զիվորական ճամբարում էր գիշերել, վեր թռավ քնից, նստեց մահճակալի կողքին, բռնեց գլուխն ու սկսեց լաց լինել:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՈՒ ԳԱԼԻՍ Է ԱՆՍՊԱՍԵԼԻ

Հայկի ապարանքում խնջույք էր: Թեժ երեկոն բոլորին կտրել էր առօրյա խառը հուզումներից: Խնջույքը հրաշալի ընթացք է ստանում, երբ ճիշտ օր է ընտրված դրա կազմակերպման համար: Ամբողջ ցերեկն անցել էր պսպղուն արեգակի դեղնավուն շղարշ-շողերի ներքո: Օրվա ջերմությունը նրբանկատ մարդկանց հոգիները բերկրանքով էր լցնում, իսկ անտարբեր մարդկանց՝ անհասկանալի երջանկություն պարգևում: Ամեն ինչ այնքան հաճելի էր, որ չէր կարող երկար ձգվել:

Խնջույքը, որը լի էր պերճախոս պոետներով, բարձրաստիճան զինվորականներով, արդարամիտ ազնվականներով, վսեմ իշխանավորներով ու դրախտային գեղեցկուհիներով, հասել էր գագաթնակետին: Խնջույքավորների կողմից ձևավորած տարբեր խմբերն անզուսպ զրույցներ էին վարում, ոգին լցնող խմիչքներ խմում, կատակում, զարմանում, զվարճանում, երգում ու պար էին գալիս, իսկ այս ամենը ամբողջացնում էր արքայի սիրելի նվագախումբը՝ իր նուրբ ու համատեղելի երաժշտությամբ: Ամեն ինչ հրաշալի էր, սակայն արքան ինչ-որ բան էր զգում ու սպասում էր դրան: Նա մնացածի հետ արդեն բավական ժամանակ էր անցկացրել՝ հասկանալու համար, որ օրն աննման է անցել, ուստի պետք է որ անսպասելի ավարտ ունենա:

Ընդարձակ դահլիճը գրված խրախճանքը շարունակվում էր, երբ երկար, սև թիկնոցով, անսովոր հագուկապով

օտարերկրացին՝ շրջապատին անտարբեր, արքայի ուղղությամբ էր քայլում: Արքան հանգիստ ու համբերատար հայացքով հետևում էր, թե ինչպես են հյուրին ուղեկցող համազգեստավորները, իր մոտ հասնելով, թիկունքի կողմից շրջապատում նրան՝ այդպիսով վերջինիս և արքայի համար որոշակի ազատ տարածություն ստեղծելով: Ինչքան էլ որ ուշադրություն գրավելու նպատակը բացակայում էր, այնուամենայնիվ խնջույքը սկսեց դանդաղ մարել: Գնալով ավելի ու ավելի շատ մարդ էր նկատում արքայի դիմաց կանգնած տարօրինակ մասնակցին: Ամեն ինչ փոխվեց, երբ բոլորի համար հասկանալի դարձավ, որ նորեկն օտարերկրացի է, ով խոսում է չափազանց ճարտար լեզվով.

- Ողջունում եմ ու պատիվ ունեմ ողջույններ փոխանցելու այն երկրից, որտեղից որ եկել եմ ու կանգնել Ձեր դիմաց, հզոր երկրի Հայկ թագավոր, - բանագնացն այսպես սկսեց խոսքը, - Ձեր երկիրը, որտեղ խառնվում են չորս գետերը, որտեղ աստվածներն են ապրում, իսկ մարդիկ նրանց են նմանվում, շարունակում է զարմացնել ինձ՝ անկախ նրանից, թե որերորդ անգամ եմ այստեղ այցելում:

Գահին բազմած Հայկ արքան, ում կողքին էր նաև թևը վիրակապած ու դեռ թաց սպիներով պատված Արամը, զննում էր արդեն կանգ առած խնջույքի բազմությանը և ուշադիր բանագնացի խոսքն էր լսում: Մյուսները նույնպես փորձում էին որսալ վերջինիս բառերը: Օտարերկրացին զգաց, որ խնջույքն իր մուտքով սպառվեց, սակայն առանց որևէ մեղավորություն ցուցաբերելու՝ շարունակեց.

- Ես եկել եմ երկրից, որտեղ արծվի թռիչքը կարելի է վերևից դիտել, որտեղ քամիները խոսում են, ամպերը բոցկլտում, իսկ լիությունը ոչ ոքի չի զարմացնում: Ես եկել եմ մի երկրից, որտեղ թագավորում է հսկա աստվածների որդի Բելը, ում անունը միայն ողջ աշխարհը սարսուռի մեջ է պահում: Բել արքան ապրում է՝ սիրելով խաղաղությունը, սակայն չի վարանում կռվել, եթե ժամանակներն այդպես են պահանջում: Ոչ ոք ու ոչինչ չի կարող կանգնեցնել նրան, քանի դեռ նա ինքն է առաջ շարժվում: Իսկ Դու՛ք, հայոց աստծո որդի Հա՛յկ, կանգնած եք նրա ճանապարհին:

Բանագնացի վերջին խոսքերից Հայկ արքան խոժոռվեց, իսկ հավաքվածների մոտ թեթև լարվածություն զգացվեց: Արքան բանագնացի խոսքից հետո փոքրիկ դադար վերցրեց՝ կարծես ինքն իրեն զսպելու նպատակով.

- Այն, որ խնջույքի պահին կարող ես կանգնել իմ առջև ու խոսել այնպես, ինչպես խոսեցիր հենց նոր, մեր ջերմ վերաբերմունքի, անհատակ հարգանքի ու հյուրընկալության արդյունքն է, ինչպես Բել արքայի, այնպես էլ նրա երկրի ու ներկայացուցիչների հանդեպ: Բանագնացի խոսքը չսպասեցնելը բարեվարքության կարևոր կանոն է մեզ համար, այնպես, ինչպես քեզ պատվելը՝ Բել արքային վայել կերպով: Սակայն, սիրելի՛ Մուբարակ, մենք վաղուց ենք ծանոթ, ուստի դու պետք է գլխի ընկնես, որ բարեվարքությունը թուլության հետ խառնելն արդեն իսկ հիմարություն է: Քո պերճախոսությունը դեռ զարմացնում է ինձ, սակայն վերադարձի՛ր քո երկիր ու փոխանցի՛ր հսկա Բելին, որ ես կանգնած չեմ որևէ մեկի ճա-

նապարհին, ես կանգնած եմ իմ ժողովրդի կողքին, ով խաղաղություն է տենչում:

Հմուտ Մուբարակը, ով սպասում էր հակադարձի, մաքրեց ճակատի քրտինքը, հանեց թիկնոցը, քանի որ ներսում շատ շոգ էր՝ դրանով իսկ փոքր-ինչ մտածելու ժամանակ շահելով, շունչ քաշեց և խոսեց.

- Հա՛յկ արքա, Ձեր ընդունելությունը միշտ ավելին է, քան անհրաժեշտ է, իսկ թշնամուն պատվելը Ձեր համբավն ավելի է բարձրացնում: Խնդրում եմ ներողամիտ լինել խրախճանքն ընդհատելու համար, սակայն ես պետք է ասեմ, որ իմ արքա Բելը պահանջում է վերադարձնել իր պապերի հողերը, որոնք հիմա Ձեր երկրի արևմտյան բարեբեր տարածքներն են: Ամբողջ աշխարհը Բելի ոտքերի տակ է, իսկ դուք մեր հողերը յուրացրել եք:

Խորամանկ Բելը լավ գիտեր, որ Մուբարակը այն միակն է, ում պետք է բանագնացի գործը վստահել: Հմուտ Մուբարակը դիտավորյալ էր ընտրել հենց խնջույքի պահին ներս մտնելը և Բելի խոսքերը փոխանցելը: Նրա նպատակը ժողովրդի մեջ խուճապ մտցնելն ու երկրի խաղաղ ընթացքի վրա ազդելն էր: Նա չէր ուզում ասելիքը թաքուն փոխանցել:

Մուբարակի վերջին խոսքերից հետո դահլիճում խժդժոց սկսվեց: Խնջույքավորները գնալով ամբոխի էին վերածվում, ինչն արքային անհանգստացրեց: Նա որոշեց խոսակցությունն առանձին շարունակել և ձեռքը բարձրացրեց, որպեսզի իր մոտ կանչի պահակախմբի ղեկավարին՝ անհրաժեշտ հրահանգներ տալու նպատակով: Մինչ այս ամենը կկատար-

վեր, ներկա երիտասարդ իշխանավորներից մեկն ամբոխի կույտից դուրս պրծավ և կատաղությունը չկարողացավ զսպել.

- Արքայիդ ու ժողովրդիդ մեջ պիղծ արյուն է հոսում, ի՞նչպես ես համարձակվում այդպես խոսել, կեղտո՛տ խոզ... այստեղ արի՛, - իշխանավորը գոտկատեղից դաշույն դուրս քաշեց ու այս ամենն արտաբերեց համարյա բղավելով, ապա մի կողմ հրեց թիկնապահներից մեկին, ձեռքը գցեց ու բռնեց բանագնացի թևքից, ու իր կողմ քաշելով փորձեց դաշույնը վերջինիս որովայնը մխրճել:

Բանագնացն առաջին հարվածից կարողացավ խուսափել, սակայն տաքարյուն իշխանավորը չէր պատրաստվում այդքանով սահմանափակվել, - կեղտո՛տ շներ, - շարունակեց ավելի բարձր բղավել, - ձեր պատճառով ամեն օր զինվոր է մեռնում, - մինչ իավասարակշռությունը կորցրած թիկնապահը զգաստանալով կհասցներ բռնել ոճրագործին, վերջինս երկրորդ անգամ դաշունահարելու սրընթաց փորձ կատարեց, սակայն զինվորները կարողացան տապալել նրան:

Խնջույքն արդեն անկառավարելի մարդակույտ էր դարձել: Բոլորի մոտ անկարգ շարժումներ ու քննարկումներ սկսվեցին, երբ Հայկը ոտքի կանգնեց, իսկ նրան՝ ծանր շարժումներով հետևեց նաև Արամը: Հեռվից մոտեցող պահակախմբի ղեկավարի հայացքը բռնելով՝ արքան խնջույքը ցրելու և բանագնացին իր մոտ բերելու նշաններ տվեց, ապա մթագնած նայեց գետնին տապալած երտիասարդ իշխանին, ով զինվորականների ձեռքից պրծնելու և կրկին ոտքի կանգնելու փորձեր էր անում. «Բաց թողե՛ք ինձ, պետք է սպանեմ այդ շանը»:

Արքան մոտեցավ նրան, գետնից բարձրացնելու հրահանգ տվեց, ապա երեսն ականջին մոտեցնելով՝ շշնջաց, - «Դու ե՞ս այն մեկը, ով պետք է խոսի», - հետո, փոքր-ինչ զննելով ամոթից կարկամած իշխանիկին, մի քանի հուժկու շարժումով պոկեց վերջինիս զգեստները զարդարող շքանշաններից մի քանիսը, ապա ամուր բռնեց նրա կոկորդից, սկսեց անզուսպ սեղմել, վերջինիս գլուխը կրկին մոտեցրեց շրթունքներին:

- Խաղաղությունը կուրացրել է քեզ: Վախեցի՛ր պատերազմից, - արքան հրեց ու բաց թողեց երիտասարդ իշխանավորի կոկորդը, պտտվեց ու պահակախմբի պետին իրեն հետևելու նշան տալով՝ հեռացավ:

Մի քանի զինվորական, բանագնացին ուղեկցելով, արքային էին հետևում, այնպես, ինչպես վեհապանծ Արամը, ով երկար ձգվող խնջույքից հյուծվել էր, իսկ դեռ թարմ վերքերը թույլ չէին տալիս գիտակցությունը լրիվ թարմ պահել: «Բազմիշխանությունը լավ բան չէ, պետք է մի իշխան լինի»[3], - մի պահ մտածեց արքայազն Արամը:

---

[3] Տե՛ս Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունում:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՍԱԿԱՅՆ ՀԵՆՑ ԱՅԴՊԵՍ ԷԼ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՐ

«Ո՛վ հայոց Հայա աստծո որդի Հալդի, բոլորին է հայտնի, որ ես՝ Բելը, այն մեկն եմ, ով տիրում է աշխարհին ու այս երկնքի տակ չկա ոչինչ ու ոչ ոք, որ հրամանիս չի ենթարկվում: Աշխարհ պատող ծովերն ու լեռ ժայռերը, անտառները, լեռները, ձորերն ու գետերն իմն են: Երկինքն իմ կողմն է, իսկ իմ թագավորությունն՝ աստծով օրհնված ու հավերժ: Այսօր, երբ ես կանգնած էի զորքիս առաջ, նորից տեսա, որ իմ բանակն անպարտելի է, սակայն մի բան կա, որ ինձ հանգիստ չի տալիս: Ժամանակին իմ երկիրը ելք ուներ դեպի արևելյան ծովեր, իմ պապերը, ովքեր հսկա աստվածներից էին, ճամփորդում էին ու վայելում այն ամենն, ինչ տալիս էր Դրախտի երկրի բարեբեր հողը: Հիմա, երբ երկար ժամանակներ են անցել, այդտեղ կառավարում ես դու, ով ապարանք է կառուցել պապերիս գերեզմանների վրա:

Իմաստու՛ն Հալդի արքա, դու միակն ես երկնքի տակ, ով թագավոր է կոչվում ու իմ երկրին տուրք չի տալիս: Դու չես սպառնում ինձ, սակայն հիմա պատերազմի ժամանակներ են: Տու՛ր ինձ այն, ինչ երկնքով ինձ է պատկանում, ենթարկվի՛ր ինձ այնպես, ինչպես ամբողջ աշխարհն է ենթարկվում»:

Մինչ Հայկը կարդում էր Բելի խոսքերը, բանագնաց Մուբարակը մի կերպ իր անհանգստությունն էր թաքցնում: Նա չգիտեր, թե այդտեղ ինչ է գրված, գրությունը կնքված վիճակում էր հանձնվել, իսկ վերջին դեպքերը ստիպում էին ամեն ինչի սպասել: Առանձնասենյակը, որտեղ արքան ու Մուբա-

ռակը պետք է շարունակեին զրույցը, կառուցված ու կահավորված էր այնպես, որ արքան կարողանա լիարժեք հանգստանալ: Այդտեղ չափավոր լույս էր թափանցում, իսկ պատերի երկայնքով փափուկ գործվածքներով պատված նստատեղեր էին ներկառուցված: Արքան սիրում էր երկար ժամանակ անցկացնել այդտեղ, խորհել, ստեղծագործել, թիկունքը հենել փափուկ բարձերին ու հանգստանալ աշխարհի մտածմունքներից:

Բելի նամակը Հայկը կարդաց, երբ արդեն փոխել էր տոնական զգեստները, լոգանք ընդունել ու մի քիչ սիրելի գինուց խմել: Կարդալուց հետո խորաթափանց թագավորը մի կողմ դրեց գրվածքը, ժպտաց ու դիմեց Մուբարակին.

- Երիտասարդի փոխարեն խնդրում եմ ներողամիտ լինել, սիրելի՛ Մուբարակ: Ինձ կպատվես, եթե մի քիչ գինի խմես ինձ հետ, - ապա, ձեռքով դիմացի նստատեղը ցույց տալով, շարունակեց, - երիտասարդներն անփորձ են: Նրանք կարծում են, թե զգացմունքներն են կառավարում աշխարհը: Մուբարակը թեթևություն զգաց, առաջ եկավ ու նստեց վեհաշուք արքայի դիմաց:

- Քեզ զգա այնպես, ինչպես քո տանիքի տակ, սիրելի՛ բարեկամ, - Հայկը գինի լցրեց Մուբարակի առջև դրված գավաթը:

- Սիրելի արքա՛, - խոսեց Մուբարակը, - Ձեր բարձրախոհության մասին աշխարհի ցանկացած ծայրում լսել են, Ձեր իմաստության մասին աշուղները պատումներ են հյուսում, սակայն չե՞մ վիրավորի Ձեզ, եթե ասեմ, որ ոչ մի վեհաշուք

ապարանք չի տա ինձ այն ջերմությունը, որ իմ խղճուկ տանիքի տակ եմ զգում:

Մուբարակը մի կում արեց գինուց ու իրեն հատուկ խորամանկությամբ սկսեց շուրջբոլորը զննել.

- Բարեկա՛մ, իսկապես արժեքավորը գանձերի հետ հնարավոր չէ փոխել: Վստահորեն կարող եմ ասել, որ այս աշխարհում ամեն ինչն էլ իր գինն ունի ու ամեն ինչ կարելի է ձեռք բերել, եթե պատրաստ ես վճարել դրա դիմաց այնքան, որքան պահանջվում է, սակայն այդ վճարը, որպես կանոն, գանձերն ու հարստությունը չեն, առաջին հայացքից հասանելի են թվում, սակայն իրականում շատ թանկ արժեն: Իհարկե, այս հսկա ապարանքն ինձ համար արժե ճիշտ այնքան, որքան քեզ համար քո հարազատ տունը, սիրելի՛ ընկեր, - խոսեց արքան:

- Այո՛, իմաստուն արքա: Իմ տունը չէր լինի, եթե այնտեղ իմ սիրելի կինն ինձ չսպասեր, - ավելացրեց հյուրը:

- Եթե կյանքն ու արժեքները ճիշտ ես գնահատում, ուրեմն արդեն իսկ թագավոր ես, - նկատեց Հայկը, - ես այս պահին տեսնում եմ քո գլխին դրված թագը, - ավարտեց արքան:

Մուբարակն արքայի աչքերում աստվածային փայլ ու խորություն նկատեց: Նա մինչ այդ երբեք նման բան չէր տեսել: Բանագնացի խառնված մտքերը մի պահ հանդարտվեցին, ու նա նկատեց այդ փոփոխությունը.

- Ճշմարիտ է, աստվածների որդի: Ես, լինելով այն մեկը, ում պարտքն է Բել արքայի խոսքը հասցեատիրոջը հասցնել, շատ թագակիրների եմ տեսել, շատերի հետ խոսել,

շատերի հետ կռվել մարտի դաշտում՝ Բելի կողքին: Արքաներից շատերին, ում արքայիս խոսքն եմ փոխանցել, տեսել եմ մեռած, շատերին՝ ստրկացած: Իմացի՛ր, հզոր Հայկ արքա, որ այստեղից դուրս գալուց հետո ես շտապելու եմ Բելի ամրոց, պատմելու եմ ամենը, ինչ կատարվում է այստեղ, պատմելու եմ այն ամենն, ինչ տեսնում եմ ու լսում եմ, կռվելու եմ արքայիս կողքին այնքան, ինչքան պետք է ու հնարավոր է, որ զենքով դուրս գամ հենց Ձեր դեմ, հզո՛ր արքա:

Հայկ նահապետը ոտքի կանգնեց, քայլեց դեպի պատուհանը, նայեց բոցկլտացող արեգակին, որը համարյա կորել էր տեսադաշտից, ապա շարունակեց.

- Գնա՛ ու ասա՛ արքայիդ, որ Հայկ թագավորն իր նախնիների որդին է մնում ու պատրաստ է մեռնել այնպես, ինչպես իր պապերը, քան թե ստրկանալ անիրավ Բելին: Տուն վերադառնալիս ուշադիր զննիր ամենը, փորձիր նկատել ինչ տեսնում ես իմ երկրում, գնա՛ ու պատմի՛ր արքայիդ այն, ինչ տեսել ու լսել ես, քանի որ, երբ մարտի դաշտում դուրս գաս իմ դեմ, ես չեմ վարանելու խնայել քեզ: Ես մտածելու եմ քո հոգին ջերմացնող տան ու այնտեղ սպասող կնոջդ մասին, սակայն դա չի կարող նշանակել, որ ես ինձ հակառակ եմ գործելու: Երբ դուրս գաս ապարանքից, հիշի՛ր, որ անցնելու ես ժողովրդիս միջով: Մուտք գործելով ու խաթարելով խնջույքս՝ դու մարդկանց ի ցույց դրեցիր այն ամբողջը, ինչը քո Բել արքան մտածում է: Հիմա, երբ բոլորը գիտեն դրա մասին, հասի՛ր քո երկիր, եթե կարող ես:

Հայկը գինու բաժակը դատարկելով դուրս եկավ սենյակից ու հրահանգեց կարգի բերել բանագնացին, կերակրել, թույլ տալ, որ հանգստանա ու ընծաներ ուղարկել նրա հետ:

Հաջորդ օրը՝ կեսօրին, երկու թիկնապահ ուղեկցում էին Մուբարակին, ով մահվան ահը սրտում պետք է հասներ իր երկիր՝ աշխարհին տիրող Բել արքայի մոտ:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ԱՆԿԱԽ ՔՈ ԿԱՄՔԻՑ ՃԱՄՓԱԴ ՍԿՍՎՈՒՄ Է

Շիվինի իշխանը, ում ամբողջ զարմը զինվորականներ էին, ով Հայկի հավատարիմ զորահրամանատարներից էր և ի պատիվ արքայի բազմաթիվ մարտեր էր հաղթել, երբևէ ապրած ամենաքաջ մարտիկներից էր: Ճարպկությունը, փորձը, ուժն ու խորամանկությունը համադրելով և Հայկի կողքին կռվելով՝ Շիվինին երկրի վրա հարձակվող բազմաթիվ ցեղեր էր կոտորել ու վռնդել իրենց տարածքներից: Շիվինիի պատվին Հայկ արքան քաղաք էր կառուցում, որն անվանակոչելու էր նրա անունով՝ այն բանից հետո, երբ քաջ ռազմիկը զոհվել էր Բելի կողմից կազմակերպված դավադիր հարձակման ժամանակ: Շիվինիի և նրա ավագ որդու մահվան օրը Բելի զինվորները խրախճանքով էին նշում, քանի որ կարծում էին, թե ինքը արևից է հովանավորվում և հասարակ զենքերով հնարավոր չէ սպանել նրան: Ռազմիկի կտրված գլուխը յոթ օր ու գիշեր մնացել էր ցցի հանված ու Բելի զինվորական ամրություններից մեկի մուտքի մոտ ի ցույց դրված:

Շիվինիի որդի Միհր իշխանիկը դեռ մանուկ տարիքից տարվել էր ռազմի գործով: Իշխանիկի հայրը, որ կրտսեր որդուն ամենից շատն էր սիրում, մշտապես ռազմի պատմություններով էր զվարճացնում նրան, իր հերոսություններից պատմում, փորձում էր որդուն փոխանցել այն ամենն, ինչ գիտեր ու տեսել էր: Նրանք հաճախ էին միմյանց հետ մարզվում, հաճախ ռազմի խաղեր խաղում, հաճախ որսի գնում: Միհրը իր հոր արժանի զավակն էր՝ նույնքան հայրենասեր,

նույնքան քաջ, չնայած երիտասարդ տարիքին՝ շատ քաջագործություններ էր կատարել ու բազմաթիվ պարգևների արժանացել: Միհրն անիծում էր այն օրը, երբ իր հայրն ու ավագ եղբայրը փոքրիկ խմբով զոհ գնացին Բելի դավադրությանը: Այդ հարձակումը բոլորի կողմից անսպասելի էր և այն առաջիններից էր, որից հետո երկու երկրների հարաբերությունները սկսել էին լարվել:

Զուսպ ու վեհախոհ Միհր իշխանիկը երբեք կատաղությանը չէր տրվի և երբեք հունից դուրս չէր գա, սակայն խնջույքի օրը երիտասարդն ինքն իրեն նման չէր: Վաղ առավոտից Միհրը տարօրինակ մտածմունքների մեջ էր: Հոր մահից հետո նրա կյանքը փոխվել էր, քանի որ Հայկ արքան արգելել էր Միհրին որևէ ռազմական գործով զբաղվել և հրահանգել էր իր տանը տեր կանգնել, հոգ տանել իր զարմին:

Միհրը որոշել էր ամուսնանալ, ընտանիք կազմել ու հենց այդ պատճառով էլ ընդունել էր Հայկ արքայի՝ խնջույքին մասնակցելու հրավերը, հագել էր պերճաշուք զգեստները, զարդարվել պարգև ստացած շքանշաններով և որոշել փոքր-ինչ ցրվել օրվա տաղտկությունից: Խնջույքը թեժացել էր ու Միհրը, իսկապես, գեղեցկուհու էր հանդիպել, վերջինիս հետ զրույցի բռնվել, երբ Մուբարակը խաթարեց ամբողջը: Երկար ժամանակ կուտակած կատաղությունն արդեն հնարավոր չէր զսպել:

Հայկ արքայի կողմից սաստված իշխանիկը նստած էր իրենց առանձնատան վարդերի պարտեզում և երազում էր, որ խնջույքի ժամանակ իր դանակը մխրճված լիներ Մուբարակի սրտում: Միհրին հանգիստ չէր տալիս այդ միտքը:

Պարտեզը զարդարող ծաղիկներին նայելով՝ Միհրի աչքերն արցունքներով լցվեցին, - հայրի՛կ, - հազիվ հասկանալի հեծկլտոց դուրս թռավ Միհրի շրթունքներից: Իշխանիկը ոտքի կանգնեց, մաքրեց արցունքներն ու տուն մտավ:

Կեսօրին Մուբարակն արքայի թիկնապահների ուղեկցությամբ հասավ մինչև ապարանքի դարպասները, սակայն դուրս եկավ արդեն միայնակ: Բանագնացը որոշեց ընտրել մարդաշատ վայրերով անցնող ճանապարհները և քայլեց ապարանքից ոչ հեռու եռացող շուկայի կողմը: Այստեղ վաճառականները հուշանվերներ, կտորեղեն, համեմունքներ, զգեստներ, սպասք ու շատ ուրիշ ապրանքներ էին վաճառում: Շուկան լիքն էր օտարերկրացիներով:

Մուբարակից հետո դարպասը կրկին բացվեց ու սև թիկնոցով, երեսը կիսափակ մեկը ողջագուրվեց դարպասի մոտի պահնորդներից մեկի հետ, վճարեց նրան ու նույնպես դուրս եկավ: Շարժվելով Մուբարակի հետևից՝ սևազգեստ անծանոթը բավականաչափ հեռավորություն էր պահպանում, սակայն ջանում էր տեսադաշտից չկորցնել բանագնացին: Շուկայի վաճառասեղաններին մոտենալով՝ Մուբարակը հետ շրջվեց, տեսավ սևազգեստ թիկնոցավորին, ինչ-որ բան կասկածեց, սակայն գերադասեց չհավատալ տեսածին:

Վաճառասեղանների արանքներով անցնելով՝ Մուբարակը փորձում էր հնարավորինս խճճել իր ճանապարհի հետագիծը. հաճախ էր զննում շուրջբոլորը, տեսադաշտում թիկնոցավորին էր փնտրում: Որոշ ժամանակ շուկայում շրջելուց և կասկածելի ոչինչ չնկատելուց հետո բանագնացը որոշեց շարունակել ճանապարհը, սակայն վաճառականներից մեկի

մոտ շատ գեղեցիկ ձուլվածքով վզնոց նկատեց: «Կնոջս շատ կսազի», - մտածեց ճամփորդը, առանց գին սակարկելու վերցրեց վզնոցը, տեղավորեց արքայից ստացած ընծաների պարկի մեջ ու, երջանկացած կնոջը պատկերացնելով, գլուխը բարձրացրեց:

Վերջին վաճառասեղանների մոտ՝ Մուբարակի դիմաց, կանգնած էր այն նույն թիկնոցավորը, ով առանց երկար սպասելու բացեց երեսը: Բելի փորձառու բանագնացը ճանաչեց տղային: Միհր իշխանիկը շատ հանգիստ շարժումներով մոտեցավ զոհին, ձախ ձեռքով բռնեց նրա շորերից, իսկ աջ ձեռքի դանակը մի հարվածով խրեց Մուբարակի սիրտը: Ինչքան շատ էր նույն պատկերը պտտվել տղայի գլխում: Վերջապես այն իրական դարձավ: Բանագնացն առանց դիմադրելու ծնկի իջավ, իսկ մարդասպանը տեղափոխվեց զոհի թիկունքի կողմը: Իշխանիկը դուրս քաշեց դանակն ու յուրահատուկ սառնասրտությամբ մի քանի շարժում արեց, կտրեց Մուբարակի կոկորդը, ապա գլուխն առանձնացրեց պարանոցից: Շուկայի վաճառականները չէին հավատում իրենց տեսածին: Շատերը բղավելով այս ու այն կողմ էին փախչում՝ մարդասպանից հնարավորինս հեռավորություն պահպանելու համար:

Միհրը Մուբարակի արնաքամվող, բերանը կախ, ծամածռված գլխի մազերից բռնած անցնում էր շուկայի վաճառականների, օտարերկրացիների ու հայրենակիցների միջով: Սարսափած հայացքները խոցում էին տղային: Շատերը տեսան, թե ինչպես իշխանիկն անարգել հասավ Հայկ արքայի ապարանքի դարպասների մոտ ու Մուբարակի կտրված գլուխը պարսպի վրայով նետեց արքունի պարտեզ:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
ՍԻՐՈՂ ՍԻՐՏԸ

Հայկ թագավորը փոքրիկ շրջագայությունից էր վերադառնում: Ապարանք հասնելուն պես նրան իմաց տվեցին Մուբարակի սպանության մասին: Լուրը բարկացնող էր, սակայն սպասելի: Արքան դղյակ մտավ, բարձրացավ իր առանձնասենյակ, մի փոքր ննջեց, ապա սկսեց պատրաստվել ընթրիքին: Արդեն երեկո էր, իսկ Հայկը շարունակում էր մտատանջությունների մեջ մնալ: Մուբարակը, թեև թշնամի էր, այդուհանդերձ՝ սպանվելով արքայից մի կտոր տարավ իր հետ: Պարզ էր նաև, որ Բելի հետ հարաբերություններն ավելի են սրվելու: Մուբարակն այն քչաթիվ մարդկանցից էր, ում Բելը դեռ կարող էր վստահել:

Հայկ արքայի խոհերը ստիպելու էին ավելի տհաճությամբ ընթրել, քան անցած անգամները: Կերակուրները շատ չուշացան, քանի որ արքան դրանց չէր սպասում: Խոհարարն իր գործը լավ գիտեր: Նա ոչ միայն աննման էր պատրաստում, այլ նաև կարողանում էր հրաշալի հրահանգել իր խոհանոցի ենթականերին, ինչպես նաև հրաշալի մատուցել: Այն նույն աղախին աղջիկը միայնակ էր արքայի հետ: Հայկը փոքրիկ պատառները մի կերպ բերանն էր դնում, դանդաղ ծամում և ծանր կուլ տալիս, իսկ աղջիկը լուռ կանգնած էր սենյակի անկյունում՝ սպասելով նոր հրահանգների:

Արքայի՝ անորոշությանն ուղղված հայացքը հանկարծ կենտրոնացավ և ուղղվեց անկյունում կանգնած աղջկան: Հաճախ կարելի է նայել, սակայն չտեսնել: Այդժամ, ինչ-որ

բան արքայի սրտին ստիպեց տեսնել այն, ինչ մինչ այդ անտեսանելի էր: Աղջկա հայացքն այնքան խորն էր, այնքան լիքն ու այնքան գրավող, որ Հայկն այնտեղ ինքն իրեն տեսավ: Արքան մինչ այդ չէր նկատել, թե ինչպես է իր հոգեվիճակը աղջկա կողմից պատճենվել, սակայն անհամեմատելի նրբագեղ երանգներ ստացել: Նրա հոգին Հայկի վրա բազմագույն ծաղիկներով պատված դաշտերի տպավորություն թողեց, որտեղ երկինքը ոսկեշող ամպերով էր զարդարված: Հանկարծ արքան արթնացավ տանջող քնից, պատված մշուշը ցրվեց: Կարծես թե ամբողջ գիշեր ձգված հյուծող փոթորիկը առավոտվա թարմության ուժով անհետանում էր:

Խոհարարը կրկին ներս մտավ ու խաթարեց անկրկնելի վայրկյանը: Թագակիր արքայի ուշադրությունը կրկին տեղափոխվեց խոհարարի ժամանակավրեպ հարցերին պատասխանելու վրա: Առանց լրջորեն հասկանալու խոհարարի խոսքը՝ Հայկը շարունակում էր համաձայնություն տալ նրա հարցերին, իրականում փորձելով մերժել խոհարարի ներկայությունը և կրկին տարվել անկյունի աղջկա կերպարանքն ուսումնասիրելու գրավիչ գործով: Աղջիկը հայացքը գետնից չէր էլ բարձրացնում՝ այդպես էլ չնկատելով, թե ինչ է այդ պահին զգում արքան, և թե ինչ է կատարվում վերջինի հոգում:

Երբ խոհարարն ավարտեց զրույցը և, բարեհամբույր խոնարհվելով, լքեց սենյակը, արքան շարունակեց ձևացնել, թե սնվում է: Անծանոթ զգացողությունը զարմացրել էր Հայկին և նա երկար ժամանակ չէր կարողանում սթափվել: Չգիտես ինչու, այդ աղջիկը սկսեց մեծ կարևորություն ձեռք բերել, սկսեց հետաքրքիր դառնալ, գրավել ու ուշադրություն պահանջել:

Մինչ այդ հասարակ մեկը թվացող ծառայողը սկսում էր ավելի ու ավելի խորը տպավորություն գործել, գնալով ավելի խորհրդավոր ու անհասանելի դառնալ: Այդ պահին ուրիշ ոչինչ այդքան կարևոր չէր: Ինքն իրեն այդքան խորաթափանց համարող, հաճախ ինքնավստահ, սովորաբար կտրուկ և բավականին փորձառու արքան, ով գրեթե ամենուր առաջինն էր, սկսեց կասկածել ինքն իր վրա ու սկսեց թերագնահատել ինքն իրեն: Մինչ այդ բոլորովին անծանոթ զգացողությունները նույնքան հաճելի ու հրապուրիչ էին, որքան՝ թուլացնող ու կազմաքանդող: Այս ամենն ամուր մեկի համար չափազանց վտանգավոր է, հեշտությամբ թուլության է վերածվում, ինչն էլ այն ավելի հրապուրիչ ու ձգող է դարձնում: Մշտապես ամուր լինելը հոգնեցուցիչ է, ձանձրացնող:

Աղջկա ներկայությունն ինչքան երկար տևի, այնքան նրանից կախվածությունը ավելի կմեծանա, իսկ շփումն ավելի հաճելի կդառնա: Նրա հետ կապված ամեն մի մանրուք այնքան կարևոր է, իսկ նա՝ իր չափավորության մեջ, այնքան նուրբ է, այնքան սլացիկ, այնքան կանացի ու արտահայտիչ.

- Քանի՞ տարեկան ես, - անսպասելի հարցրեց արքան, ինչից երկարատև լռությունը ջարդուփշուր եղավ, իսկ աղջիկը միանգամից շփոթվեց:

- Տասնութ, - փոքրիկ դադար վերցնելուց հետո միայն աղջիկը կարողացավ պատասխանել:

Նրա ձայնը նույնպես դյութիչ թվաց: Այն զվարթացնող էր, չափազանց շոյող: Նա դեռ երեխա է: Մի՞թե սա այն նույն աղջիկն է, ում հետ մի քանի օր առաջ արքան խոսում էր այնպիսի հյուծող թեմաներից, ինչպիսին է կյանքի իմաստը:

- Իսկ ես՝ քսանութ, - ավելացրեց արքան, վեր կացավ աթոռից ու մի կերպ լքեց սենյակը: Այլևս ոչինչ առաջվա նման չէր լինելու:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ
ՑԱՎ Է ՊԱՏՃԱՌԵԼՈՒ

Բելի արցունքները գունդ-գունդ գլորվում էին այտերի վրայով ու թափվում Մուբարակի գլխատված մարմնի վրա: Աշխարհի տիրակալը լաց էր լինում, քանի որ անզոր էր: Ամբողջ աշխարհը ոտքերի տակ պահող մեկը, ումից մեծից փոքր բոլորը սարսափում էին՝ այժմ ոչինչ չէր կարող անել:

- Մուբարա՛կ, ընկերս, - հազիվ վնգստում էր աշխարհակալ արքան, ու երազում էր որևէ պատասխան լսել:

Ներկաներից ոչ մեկը չէր համարձակվում գեթ մի ծպտուն հանել. ամբողջ ապարանքը սառել էր: Ոչ ոք երբեք Բելին այդ վիճակում չէր տեսել: Երկրում այդքան սովորական համարվող կայծակներն այդ պահին չափազանց խոցող տպավորություն էին թողնում: Դրանք ապարանքի հսկայական դահլիճի պատուհաններից ներս էին խուժում, և լռության մեջ Բելի ողբն ավելի սարսափելի դարձնում: Արքայի քարակերտ մարմինը ժայռագնդի նման ընկել էր գետնին ու ողբում էր:

Մի քանի զինվոր դժվարությամբ օգնեցին արքային վեր կենալ ու քայլել դեպի ննջարանը: Սենյակի կեսը զբաղեցնող անկողնուն պառկելով՝ Բելը մի փոքր հանգստացավ: Որոշ ժամանակ անց, մի քանի բաժակ գինի խմելուց հետո միայն նրան հաջողվեց մտքերը կարգի բերել: Նա վեր կացավ, կանչեց պալատականներին ու հրամայեց Մուբարակին թաղել այնպես, ինչպես վայել է արքաներին: Արյան վրեժն ավելի դառն էր դառնալու, Բելն՝ ավելի դաժան, սուրն՝ ավելի կտրուկ, իսկ պատերազմն՝ անխուսափելի:

Բելի ծերունի հրամանատարը, ով այդ պահին միայնակ էր բանտախցում, սովամահ էր լինում: Բանտապանները կերակուրը նույնությամբ հեռացնում էին այնպես, ինչպես բերում էին: Երբեմնի հզորագույն զորահրամանատարը, ում մեկ հարվածը հակառակորդին տապալում էր, կարճ ժամանակում զառամյալ էր դարձել, նրա ամրակազմ մարմինը թուլացել էր: Նրա երկար, ճերմակած, մինչև ուսերը հասնող մազերը յուղոտվել էին, գզգզվել, նրան ավելի խղճուկ դարձրել, իսկ դեմքի կնճիռները կախվել էին, ավելի արտահայտիչ դարձել:

- Ծերուկ Բո՛ազ, - ճաղավանդակի մոտից լսվեց Բելի ձայնը, սակայն անարձագանք մնաց:

- Բո՛ազ, լսում ե՞ս, - կրկնեց Բելը՝ արձագանք ստանալու հույսով, սակայն կրկին լռություն էր:

Բելը դիմեց ուղեկիցներից մեկին.

- Չլինի՞ թե մեռել է, - սակայն ուշադիր զննելով պատի տակ հարմարեցված մահճակալին մեջքով պառկած ծերունուն, նկատեց թե ինչպես է վերջինիս թիկունքը ծանր շնչառությունից շարժվում, ապա կրկնեց.

- Բո՛ազ, վեր կաց: Արքադ է եկել, հերիք սուտ քուն դնես:

Ծերունին գլուխը նվազագույն շարժումներով, բվի նման թեքեց դեպի ճաղավանդակը, աչքերը կկոցելով փորձեց կենտրոնանալ ու հասկանալ՝ արդյո՞ք երազ է տեսնում: Մի փոքր անց միայն նա մի կերպ նստեց անկողնու վրա ու խոսեց ստվերի միջից.

- Ծերու՞կ: Կարծում էի, թե ինձ հաջողվել է քեզ ինչ-որ բարեվարքություն սովորեցնել, Բելո՛ս: Ինչպե՞ս ես համար-

ձակվում ինձ այդպես կանչել: Ավելի լավ կլինի, որ ինձ մի դաշույն տաս: Ես պատրաստ եմ հանել աչքերս, կտրել ականջներս, բայց ոչ՝ տանել ներկայությունդ:

- Ծերունի Բո՛ազ, սիրելի՛ հրամանատար, մի՛ շտապիր հանել աչքերդ կամ կտրել ականջներդ, քանի դեռ չես տեսել այն, ինչ բերել եմ ինձ հետ ու լսել այն, ինչ ուզում եմ ասել:

Բել արքան ձեռքի շարժումով մոտ կանչեց ուղեկիցներից մեկին, նրա ձեռքից վերցրեց կտորի մեջ փաթաթված Մուբարակի գլուխը ու պարզեց դեպի երբեմնի հզոր հրամանատարի կողմը.

- Նայի՛ր: Ուղեղդ դեռ գործու՞մ է: Կարո՞ղ ես ճանաչել: Սա այն է, ինչ վերադարձվել է Դրախտի երկրից: Հայկն ինձ է ուղարկել Մուբարակի գլուխը: Տեսնու՞մ ես ծերուկ: Դեռ կարո՞ղ ես խոսել ժուժկալ մարդկանց մասին, ովքեր անապատ են փնտրում, - Բելն, այնուհետև, գլուխը կրկին կտորի մեջ փաթաթեց ու հրահանգեց ուղեկցին հեռանալ:

Բոազը խորը հառաչեց, դժվարությամբ կանգնեց ու տնքալով մոտեցավ ճաղավանդակին: Ստվերից դուրս գալով՝ նրա կերպարանքն ավելի տանջված թվաց: Մոտենալով Բելին՝ Բոազը բռնեց արքայի ձեռքը.

- Բե՛լ, որդի՛ս, կար ժամանակ երբ դու սիրում էիր արդարությունը, քրքջում էիր, նայում էիր երկնքին ու երազում: Ո՞վ ես դու հիմա: Ի՞նչ ես ուզում այս աշխարհից: Ու՞ր են քեզ տանում քո երազները: Կար ժամանակ, երբ ես կարծում էի, որ դու դառնալու ես արքա, ով արժանի է, բայց ո՞վ ես դու հիմա: Մի՞թե գլխիդ թագը քեզ թագավոր է դարձնում: Մի՞թե քո անծայրածիր աշխարհակալությունը քեզ տիրակալ է դարձ-

նում: Ու՞ր են այն աչքերը, որ նայում էին երկնքին, որդի՛ս: Ու՞ր են այն աչքերը, որ արտացոլում էին:

- Լռի՛ր, ծերունի Բոազ: Դու զառանցում ես, - ընդհատեց արքան՝ ծերունու արնապատ աչքերի խելագարությունը նկատելով:

- Դու վշտացնում ես ինձ, Բե՛լ: Ես այն մեղավորներից մեկն եմ, որ չնկատեցի, թե դու ինչպես փոխեցիր քո հունը: Ինչպե՞ս ես համարձակվում ինձ մոտ գալ այդքանից հետո, ինչպե՞ս ես համարձակվում քեզ հետ բերել Մուբարակի գլուխը: Քո ձեռքերին է նրա արյունն այնպես, ինչպես իմ որդունն ու նրա ընտանիքինը:

- Լռի՛ր, լռի՛ր, - բարկացավ Բելը ու ճաղերի արանքից հրեց ծերունուն: Մի հպումն էլ էր հերիք, որ նա գետնին տապալված հայտնվի, - դու չգիտես, թե ինչ ես խոսում, խելագա՛ր: Դու ես այն մեկը, ով փորձում է կանգնեցնել իմ զորությունը, ու ինչ-որ խաղաղություն ե՞ս փնտրում: Մուբարակն ինձ հավատարիմ էր՝ ի տարբերություն քեզ ու քո ընտանիքի: Մնա՛ քո հիվանդ երևակայության մեջ ու սիրի՛ր այն, ինչը քեզ խղճուկ ու թույլ է դարձնում: Գիտե՞ս, ես նայում եմ քեզ, բայց չեմ տեսնում հզոր Բոազին, ում բազկի շարժումը տասնյակներին էր տապալում, ում ստվերն անգամ խուճապ էր առաջացնում թշնամու շարքերում, ում դաշույնը միշտ թաթախված է եղել արյան մեջ: Քանի՛-քանիսն ե՞ն տապալվել քո հարվածից: Դու արդեն ծեր ես ու խելքդ թոցրել ես, հիվա՛նդ ծերուկ: Ես Դրախտի երկիրը դժոխք եմ դարձնելու, արյան շատրվաններով եմ հեղեղելու, կտրելու եմ բոլորի գլուխներն ու բուրգեր շինեմ՝ ի սարսափ իմ թշնամիների ու ի վրեժ Մուբարակի:

Ծերունին զարմացած լսում էր Բելին, ապա կրկին մի կերպ ոտքի կանգնեց.

- Կար ժամանակ, երբ մեր պատերազմները սրբազան էին: Դու խոսում ես, բայց ինքդ էլ չես հասկանում: Հիմար մարդուն տարիքն ավելի հիմար է դարձնում, իսկ իմաստունին՝ ավելի իմաստուն: Կարծում ես, թե բուրգերը վրեժ տենչացող սիրտդ հովացնելու՞ են, Բելո՛ս: Կարծում ես, թե Մուբարակն այն վերջինն է, ում գլուխը ձեռքերո՞վդ ես բռնելու: Դիակները քեզ ավելի հզոր արքա չեն դարձնում, Բելո՛ս: Դու տիրում ես աշխարհին, սակայն միշտ էլ ստրուկ ես մնալու: Մուբարակի գլուխը չէ, որ վշտացնում է քեզ: Նրա գլուխը բռնելու ու ինչ-որ բան անելու անզորությունն է քեզ վշտացնում:

Բելը, բարկությունը չզսպելով բռունցքով հարվածեց ճաղերին.

- Ես քեզ կյանք եմ շնորհում, ծերուկ Բոա՛զ, որպեսզի տեսնես ու լսես այն, ինչ լինելու է:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ
ԻՆՉՊԵՍ ՄԻԱՅՆԱԿ ՎԱՐԴԸ ՇՔԵՂ ՊԱՐՏԵԶՈՒՄ

- Կարո՞ղ եմ մի փոքր կտրել քեզ գործերիցդ, - Հայկ արքան դիմեց պարտեզում վարդերին խնամող աղջկան:

- Իհարկե, արքա՛: Ինչո՞վ կարող եմ ծառայել Ձեզ, - արքայի անսովոր ուշադրությունից աղջիկը կրկին անակնկալի եկավ:

- Ոչնչով: Ընդամենը որոշել էի մի փոքր զբոսնել ու նկատեցի, թե ինչպես ես խնամում վարդերը: Ծաղիկներ սիրում ե՞ս:

- Այո՛, արքա: Իսկ վարդեր՝ ամենից շատ:

- Ես նույնպես: Հրաշալի է, երբ գործդ սիրով ես անում: Այս հսկա պարտեզը լիքն է ծաղիկներով՝ նաև վարդերով, ես դրանք բոլորը սիրում եմ, սակայն արի ինձ հետ, ես ուզում եմ քեզ մի բան ցույց տալ, - արքան աղջկան սկսեց ուղղորդել դեպի պարտեզի հակառակ կողմը:

Արքայանիստը շրջապատող հսկա պարտեզը լիքն էր աշխարհի տարբեր ծայրերից բերված, հատված-հատված ու խումբ-խումբ տնկված բազմապիսի բարձր ու ցածր ծառերով, բազմագույն ծաղիկներով ու այլ բույսերով: Պարտեզում կարելի էր պատահաբար տարբեր հազվագյուտ կենդանիների հանդիպել: Տեղ-տեղ գեղակերտ ջրավազաններ, աղբյուրներ ու շատրվաններ էին կառուցված, որոնցից որոշների կողքին նստարաններ ու ճոճանակներ էին դրված: Պալատի հակառակ կողմում նաև ձմեռային պարտեզ էր գործում: Այդ ամենն իրար հետ կապվում էին ոլոր-մոլոր արահետներով: Անծա-

նոթ մեկը կարող էր հեշտությամբ մոլորվել ու կորցնել հետդարձի ճանապարհը:

Նման պարտեզներ Հայկի երկրում շատ կային: Գրեթե ամեն տուն նմանատիպ փոքր պարտեզ կամ այգի ուներ, ինչպես նաև ինչ-որ տեսակի կենդանաբուծությամբ էր զբաղվում, սակայն արքայանիստի պարտեզը լավագույնն էր: Երկրի գետերն ու գետակները վարար էին, իսկ լեռները, ձորերն ու դաշտերը երանելի էին ամբողջ աշխարհի համար: Աշխարհի չորս կողմից գալիս էին տեսնելու դրախտը:

Հայկ արքան բավական երկար ժամանակ էր անցկացնում պարտեզում, սիրում էր քայլել ու ուսումնասիրել այն:

- Իսկ ի՞նչ է քո անունը, - արքան ընդհատեց զբոսանքով տարված կարճ լռությունը:

- Աստղիկ:

Արքան ժպտաց: Հայկին այդ անունը շատ դուր եկավ: Աղջկա անունը, ինչպես և մնացած ամեն բան նրան ավելի ու ավելի ամբողջական էին դարձնում: Նրա հետ կապված ամեն մանրուք այնքան կատարյալ, սազական, համապատասխան ու վայել էին թվում: Աստղիկի կապույտ աչքերը, հայացքն ու ժպիտը, անգամ՝ անունը: Ամեն ինչ և ամեն խոսք, որ դուրս էր գալիս նրա շուրթերից որքան հնչեղ ու արտահայտիչ, այնքան էլ նուրբ և չափավոր էին: Աղջկա՝ ծաղիկների հետ աշխատելիս հոդոտված երկար ու բարակ մատները, նրա համեստ շարժուձևը, նրա բոլորովին անշուք, սակայն նրբաճաշակ հագուկապը ոչ շատ էին, և ոչ էլ քիչ: Պետք չէր ոչինչ ավելացնել, պետք չէր ոչինչ պակասեցնել:

Զույգը մոտեցավ մի մացառուտի, որտեղ առաջին հայացքից ոչ մի արտասովոր բան չկար: Հայկն առանց վարանելու կռացավ, ձեռքով թփերը մի կողմ քաշեց: Այդտեղ՝ բոլորից հեռու, թփերի մեջ թաքնված մի վայրի վարդ էր աճել: Նրա տված միակ կոկոնը հետաքրքիր բացվածք էր ստացել և, թվում էր, թե իր ծաղկման գագաթնակետին է հասել.

- Գիտե՞ս, Աստղիկ: Ինձ թվում է, որ այս կյանքում ամեն բան իր նպատակն ունի: Շատ հաճախ կարելի է կարծել, որ դա այդպես չէ: Եթե, օրինակ, սկսենք մտածել, թե որն է թփերում թաքնված միայնակ վարդի նպատակը, հնարավոր է, որ չգտնենք այն: Ու՞մ է պետք միայնակ վարդը, եթե այն մնացած ծաղիկների հետ միասին պարտեզ չի դառնում, այլ թաքնվում է՝ ոչ ոքի ցույց չտալով իր գեղեցկությունը:

Աստղիկը, դեռ ամբողջը չհասկանալով, նայում էր Հայկին, ում երկար, մուգ թարթիչները, ոգևորությունից պսպղացող աչքերն ավելի արտահայտիչ էին դարձնում: Նա խոսում էր՝ չհասկանալով, որ աղջկան ի ցույց է դնում այն, ինչ թաքնված էր իր հոգու խորքում: Փոքրիկ դադարից հետո արքան շարունակեց.

- Իսկ մյուս կողմից՝ ու՞մ է պետք այն վարդը, որը պարտեզի ծաղիկներից միայն մեկն է և առանձնահատուկ ոչինչ չունի: Եթե պոկենք պարտեզի ծաղիկներից միայն մեկը, այն ընդամենը ծաղիկ է: Գիտե՞ս, Աստղի՛կ, ես այս մեկին վաղուց եմ հետևում, երբ այն դեռ փոքրիկ կոկոն էր, իսկ հիմա, երբ իր ծաղկման առավելագույնին է հասել, սպասում է իր ճակատագրին:

Հայկը նորից կռացավ, բռնեց փշոտ վարդի անվնաս մասից ու պոկեց այն: Ապա, ծաղկի երանգներին ուշադրություն դարձնելով, կրկին խոսեց.

- Այս ծաղիկը ծնվել է հողից, ցողուն դարձել, ապա կոկոն տվել ու ծաղկել: Հիմա ես կարծում եմ, որ այս ամբողջ ընթացքում հետևել եմ նրան ու ոչ մեկի առաջ չեմ բացահայտել, որպեսզի այն անվնաս աճի, որպեսզի այն քաղեմ ու քեզ նվիրեմ: Եթե այն մնա այստեղ ու փտի, կկորցնի իր նպատակը ու կմնա պարզապես միայնակ վարդ՝ շքեղ պարտեզում:

Աստղիկն արքայի ձեռքից ծաղիկը վերցրեց, հոտ քաշեց, ապա ժպտաց ու պատասխանեց.

- Պարտեզը, որտեղ ես ամեն օր բույսերին եմ խնամում, այնքան շքեղ չէր լինի, եթե այս միայնակ վարդն այնտեղ չծաղկեր:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ
ԱՅՆՊԵՍ ԷԼ ԱՐՔԱՆ ԲԱԶՄԱԾ ԻՐ ԳԱՀԻՆ

Զբոսանքից հետո Հայկը պետք է հանդիպեր քրմապետ Մաժանի հետ: Վերջինս, որ երկար տարիներ առաջնորդում էր երկրի հոգևոր կյանքը, արքայից հետո երկրորդն էր: Նախորդիվ, Մուբարակի սպանության լուրը լսելով, Մաժանը որոշել էր հանդիպել արքային և կիսվել իր խոհերով:

Արքան ու քրմապետը հանդիպեցին խորհրդակցությունների սենյակում, ողջագուրվեցին ու նստեցին սեղանի շուրջը: Նրանք ժամանակ առ ժամանակ հանդիպում էին ու կիսվում խոհերով: Խոհարարը նրանց գինի բերեց, և նրանք զրույցի բռնվեցին.

- Հայոց մեծն Հայկ արքա, ես որոշել եմ այցելել քեզ, քանի որ տեղյակ եմ վերջին իրադարձություններից ու շատ անհանգիստ եմ: Կարծես թե Դրախտի երկրի վրա ամպեր են կուտակվում, - առանց դանդաղելու սկսեց Մաժանը:

- Այո՛, իմաստուն քրմապետ: Դու ճանաչածս մարդկանցից ամենաիմաստունն ես: Քո խոհերը միշտ խորն են, իսկ խորհուրդներդ՝ անգին: Եթե դու չայցելեիր ինձ, ապա ես էի գալու քեզ մոտ, քանի որ օրհնությանդ կարիքն ունեմ: Ես նույնպես անհանգիստ եմ, որովհետև թշնամիներս գնալով ավելի ու ավելի են պատերազմ ուզում: Կարծում եմ, որ պատերազմը մոտ է, քան երբևէ, - Հայկը հուսահատված խոսեց:

- Ի՞նչ է ուզում աշխարհի տիրակալ Բելը քեզնից: Ինչու՞ է հսկաների որդին այդքան շատ պատերազմ տենչում: Չե՞ք կարող խոսել, բանակցել:

- Բելը հրաժարվում է ինչ-որ բան լսելուց: Նրան հաջողվել է մնացած բոլոր երկրները ծնկի բերել: Բոլորը նրան հարկեր են վճարում, զորքեր մատակարարում: Միակը, ով նրան հետ է պահում աշխարհը տիրելուց՝ ես եմ: Նրա զորքերը թվաշատ են: Դժվար է պատերազմել մեկի հետ, ում կողքին աշխարհի լավագույն բանակն է կռվում:

- Թվերը չեն, որ պատերազմի ելքն են որոշում, այլ արդար կռիվը: Հարյուր մարտիկով դուրս արի հազարավորների դեմ ու կհաղթես, եթե կռիվդ արդար է, աստվածները կողքիդ են, իսկ զինվորներդ՝ հավատարիմ, - վստահորեն խոսեց Մաժանը:

Արքան ու քրմապետը վերցրեցին գինու գավաթներն, իրար զարկեցին ու մի քանի կում խմեցին, ապա արքան պատմեց այն պահանջների մասին, որ Բելի կողմից դրվում են խաղաղության դիմաց.

- Բելը պահանջում է մեր հարավ-արևմտյան հողերն ու ճանապարհ դեպի ծովեր: Նրա նպատակը մեր երկիրը բաժանելն է: Իմաստու՛ն քրմապետ, վերջերս ես հաճախ եմ խորհում Բելի պահանջները կատարելու մասին, քանի որ կարծում եմ, որ մեր զինվորների մահը անտեղի է լինելու: Բելի դեմն առնելն անհնար է:

- Արքա՛, այդ հողերը Բելին հանձնելով՝ մենք խաղաղության չենք հասնի: Նրա նպատակը, ամենևին ինչ-որ հողեր կամ ճանապարհներ չեն: Բելի ախորժակը մեծանալու է: Մենք ապրում ենք մեծ շրջապտույտի մեջ. կայսրությունները ստեղծվում են, մեծանում, հզորանում, որից հետո սկսվում է նրանց հետընթացն ու կործանումը: Ոչ մի տարածք, ոչ մի ծով

ու օվկիանոս, ոչ մի սար ու ձոր որևէ մեկին կամ որևէ ժողովրդի չեն պատկանում: Պետք է պարզապես հաշվի առնել, որ այսօր մենք երկիր ունենք, ուր ապրում ենք, արարում ու մեռնելով մեզնից ինչ-որ անցավոր մասնիկ թողնում այս անցողիկ աշխարհում:

- Պատվելի Մաժա՛ն, - խորը հոգոցից հետո շարունակեց արքան, - խնդրում եմ օգնի՛ր ինձ գտնել իմ հարցերի պատասխանները, քանի որ կասկածները կործանում են ինձ: Եթե այն, ինչ ունենք, այն ինչ տեսնում ենք անցողիկ է՝ ժամանակի դաժանության հետ, ապա ո՞րն է ապրելու, արարելու ու ինչ-որ հետք թողնելու իմաստը, քանի որ արդյունքում ամենն անէանալու է ու ոչինչ դառնա:

- Իմաստն, ով հայո՛ց արքա, կայանում է հենց անցողիկության ու հենց մահվան մեջ: Ապրել հազարավոր դարեր, թե ապրել մեկ օր՝ նույնն է, եթե չկա ավարտի կամ մահվան ճիշտ ընկալումն ու գիտակցությունը, քանի որ հավերժությունը կարող է վատնվել այնպես, ինչպես ակնթարթը: Մարդիկ սիրում են կառչել կյանքից ու սիրում են վախենալ մահվանից, բայց մահը մեր բոլորի ընկերն, իսկ դրա հպումը մեր օրհնությունն է: Արքա՛, ավելի լավ է ապրել կարճ և մահվան գիտակցությամբ իմաստավորված կյանքով, քան անվերջ՝ առանց որևէ սահմանափակման:

Ո՞րն է իմաստն ապրելու մի երկրում, որտեղ դու չես կառավարելու մեր ժողովրդին կամ ո՞րն է իմաստն ապրելու մի երկրում, որի ռազմիկները չեն կռվել իրենց հայրենիքի համար: Թե ինչ մահվան կարժանանա մարդը՝ նույնպես մեծ կարևորություն ունի: Արդյո՞ք մահճակալին գամված, հարյուր

տարի ապրած ծերունու հիվանդությունից մեռնելը նույնն է, ինչ ռազմիկինը, ով քաջաբար ընկնում է մարտի դաշտում՝ իր օջախն ու հայրենիքը պաշտպանելու համար: Մահը մնում է մահ, երբ պարզապես ավարտ է, սակայն ես կուզեի մեռնել քաջերի մահով, քան ընկնել անպիտան ծերությունից կամ անտեղի պատահականությունից: Չգիտակցված մահը մահ է, իսկ գիտակցված մահն՝ անմահություն[4]:

Հայկ արքան ուշադիր լսում էր քրմապետին: Նա լուռ էր ու հոգու խորքում համաձայնվում էր Մաժանի բոլոր խոսքերի հետ: Սակայն «հասկանալ, դեռ չի նշանակում փոխվել», - մտածում էր արքան.

- Խոհամիտ քրմապե՛տ, խոսքերդ պարզ են ինձ համար, սակայն, խնդրում եմ, ասա՛ ինձ, թե ի՞նչ է գիտակցությունը և ի՞նչպես պետք է փոխեմ գիտակցությունս՝ դրանում մահվան գործոնն այդքան կարևորելով:

Քրմապետը ոտքի կանգնեց ու արքան տեսավ նրա վեհությունը: Քրմապետի՝ մինչև ծնկները հասնող կրոնական զգեստը, նրան ավելի տպավորիչ էր դարձնում: Ուսերին գցված աղվեսի մորթին, ձեռքի գավազանն ու գոտկատեղին ամրացված դաշույնը Մաժանի բարձրահասակ կերպարանքին ավելի մեծ վեհասքանչություն էին հաղորդում:

Արքան հետևեց քրմապետին ու նրանք դուրս եկան պատշգամբ: Մայր մտնող արևի շողերն այնքան խնամքով էին պարուրում Հայկի երկրի բարձր շինությունները, դաշտերն ու այգիները: Քրմապետն ու արքան այնպես էին հիա-

---

[4] Տե՛ս Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» աշխատությունում:

նում տեսարանով, կարծես թե առաջին անգամ էին տեսնում այն: Ծխամորճը վառելով՝ քրմապետը կրկին խոսեց.

- Արևի որդի Հա՛յկ արքա, բնության կողմից գիտակցությունը մեզ է տրվել, որպեսզի ապրենք, հետևենք գոյին ոչ թե բնազդով, այլ ընտրությամբ: Այն, ինչ փոխանցվում է ծնողից որդուն՝ առանց գիտակցության, իհարկե, սահմանափակ կլիներ: Գիտակցությունը, ուսումնասիրելու և ընկալելու կարողությունը թույլ են տալիս լրացնել մեր նախնիների կուտակած փորձը՝ մեր ընտրությամբ, ինչն էլ մեզ որոշ իմաստով առանձնացնում է բնությունից: Մի օր կգա, երբ մարդը կսկսի ապրել առանց բնության, առանց շնչելու կամ առանց ուտելու և այդ օրը կստեղծվի մարդու նոր՝ ամբողջովին ինքնաբավ տեսակ: Սակայն այդ ամենը երբեք չի փոխի այն ընկալումների դերը, որոնց մասին մենք խոսում ենք: Փոխել գիտակցությունը՝ նշանակում է փոխել մտածողությունը, իսկ մտածողությունը մտքի ու տրամաբանության ամբողջությունն է, որոնց պետք է անընդհատ հետևել: Ոչ միայն մահվան ճշգրիտ ընկալմանը հասնելու համար, այլ նաև ամբողջ ընթացքում անհրաժեշտ է մտքերի հոսքին ուշադիր լինել: Կյանքում կան երևույթներ, որոնք ընթանում են անկախ մարդու ընկալումից, սակայն կան երևույթներ, որոնց ընկալումը դրանց էության վրա ուղիղ ազդեցություն է գործում:

Վերջին խոսքերի վրա քրմապետը դուրս քաշեց գոտկատեղին ամրացված դաշույնը, որը զարդարված էր բազմագույն, շքեղ ու թանկարժեք քարերով, և հետաքրքիր փորագրություններով, ապա շարունակեց.

- Ինչ-որ մեկն այս դաշույնին կարող է նայել որպես զարդ, մյուսը՝ որպես հուշանվեր, երրորդը՝ որպես կտրելու գործիք, իսկ մեկ այլը՝ որպես սպանության զենք: Ուրեմն ի՞նչ է սա: Մի՞թե սա պարզապես դաշույն է: Իսկ եթե այն թաքցնենք հեռու մի տեղ, ու ոչ ոք չիմանա դրա գոյության մասին, մի՞թե այն գոյություն կունենա: Ճիշտ նույն կերպ պետք է օգտագործել նաև գիտակցությունը: Հիշի՛ր, արքա՛, որ մենք, ամենևին մեր մտքերը չենք: Հիշի՛ր արքա, որ մեր գիտակցությունը նույնպես մտքերը չեն: Մեր գիտակցությունը ավելին է, քան պարզապես միտքը: Հիշի՛ր արքա, որ գիտակցությունը մի բան է, իսկ միտքն ու բառը, որը դեռ դուրս չի եկել քո շուրթերից և խոսք դարձել, բացարձակապես տարբեր էություններ են, որոնք կարող են ծնվել և գոյություն ունենալ՝ կախված քո գիտակցությունից, - քրմապետը խոսում էր առանց շտապելու, ապա, հայացքն հեռուն հառելով, փոքրիկ դադար վերցրեց՝ կարծես արքայից որևէ արձագանք սպասելով:

Ինչպես ամեն հանդիպման ժամանակ, այնպես էլ հիմա Հայկ արքան ուշադիր լսում էր քրմապետին ու փորձում ոչինչ բաց չթողնել: Այն ինչի մասին խոսում էր քրմապետը դժվար էր ուրիշ մեկից լսել կամ որևէ տեղ կարդալ: Մտամոլոր արքան հանեց գլխի թագը, դրեց ճաղավանդակին, մի քանի շարժումով ուղղեց մազերն ու հիշեց այն միայնակ վայրի վարդը, որի գոյությունը միայն իրեն էր հայտնի, ապա հիշեց Աստղիկին, որից հետո նրա հոգուն երջանկություն պատեց.

- Քրմապե՛տ, ստացվում է, որ պետք է ապրել՝ գիտակցությունը մտածողությունից վեր պահելով, ինչը կօգնի տար-

բերել ու հասկանալ սեփական մտքերը, ինչպես նաև՝ մահվան փաստը գիտակցության մեջ կարևորելով, ինչը կօգնի հասկանալ սեփական որոշումները:

Քրմապետը լուռ նայեց արքային ու տեսավ, թե ինչպես են արքայի աչքերն առանձնահատուկ փայլով զարդարվում, ապա պատասխանեց.

- Դու արժանի արքա ես, արևի որդի Հա՛յկ: Գնա՛ ու բազմի՛ր գահիդ: Հիշի՛ր նաև, որ առանց մտքերի գիտակցությունն ավելի ուժեղ է, քանի որ այդպիսով այն կենտրոնանում է ոչ թե մտքերը գիտակցելու վրա, այլ լսելու վրա այն գոյին, որին մենք աստվածներով ենք ճանաչում: Կգա ժամանակ, երբ մեր հավատալիքները կփոխվեն, ու մենք կսկսենք հավատալ նոր աստվածների, սակայն այն, ինչի մասին խոսում ենք, երբեք չի փոխվի և երևան կգա բոլոր նրանց, ովքեր որոնում են: Ես օրհնում եմ քեզ ու քո պատերազմն աշխարհի տիրակալի դեմ, խոհեմ Հա՛յկ թագավոր:

Մեծագույն հարգանքով քրմապետին դեպի իր շքախումբն ուղեկցելուց հետո Հայկն ուղևորվեց պալատի գլխավոր դահլիճ, նստեց իր գահին ու թագը կրկին դրեց իր գլխին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ
ԱՐԺԱՆԻ ՄԵԿԸ

Բելը մանկահասակ որդուն գրկած զբոսնում էր ու մտածում, որ իր զորքերին նոր հրամանատար է պետք: Արքան գլխում պտտում էր բոլոր նրանց, ովքեր կարող էին հարմար լինել այդ պատասխանատու պաշտոնի համար: Նրան հարկավոր էր ամենաճկունը, ամենադաժանն ու ամենանվիրվածը:

Երեկոյան երկրի տարբեր ծայրերում ծառայություն կատարող մեծ ու փոքր զորքերի հրամանատարներն արդեն Բելի արքայանիստ ամրոցում էին հավաքվել: Բոլորը լսել էին ծերունի զորահրամանատարի ճակատագրի մասին ու սպասում էին նոր նշանակման: Ո՞վ էր լինելու այն առաջնորդն, ով պետք է գլխավորեր Բելի աշխարհակալ զորքերը: Նա, ով ղեկավարելու էր բանակը, ղեկավարելու էր նաև աշխարհը: Մինչև երեկո երկրի տարբեր ծայրերից իրենց շքախմբերով, ընծաներով ու զարդարված հագուկապով հրամանատարները հերթով ժամանում էին: Զինվորականները, զբաղեցնելով իրենց տեղերը սպասում էին Բելի խոսքին.

- Իմ հավատարիմ ռազմիկնե՛ր, դուք բոլորդ լսել եք ծերունի Բոազի մասին: Նա արդեն ծեր է, նրա ուղեղը մթագնել է, բազուկները՝ թուլացել: Մենք երկար տարիներ է, ինչ մարտնչում ենք ամբողջ աշխարհի դեմ, գրավել ենք այն, ստեղծել աշխարհակալություն, որի մասին բոլոր ժամանակներում կխոսեն: Ամբողջ աշխարհի բարիքները մերն են: Շնորհիվ մեր աստվածների ու նախնիների օրհնության և մեր

խելամտության՝ ամբողջ աշխարհը մեր ոտքերի տակ է: Բոազը կարողացել է ծառայել իր երկրին, սակայն հիմա, երբ մենք պետք է մեր գործն ավարտին հասցնենք, նա հրաժարվում է կռվել: Դրախտի երկրի դեմ մեր պատերազմը շատ մոտ է, ուստի մեզ նոր հրամանատար է պետք:

- Հսկաների որդի Բե՛լ արքա, մենք կգրավենք Դրախտի երկիրը, եթե անգամ քո մանկահասակ որդին լինի մեր հրամանատարը - ռազմիկներից մեկը տեղից խոսեց, ու բոլորը սկսեցին ծիծաղել:

- Այո՛, մենք զորեղ ենք, բայց թշնամին չի քնում: Հայոց ռազմիկները պակաս արհեստավարժ չեն: Նրանք ծանոթ են իրենց լեռներին, արի են ու քաջ, - Բելը շարունակեց խոսել առանց ուշադրությունը շեղելու, - բացի հզորության ու հաջողության մասին մտածելուց, անհրաժեշտ է մտածել նաև սերնդափոխության մասին: Ո՞ւմ ենք թողնելու այս ամենը: Հաճախ երիտասարդ մեկը կարող է ավելի լավ գործել, ավելի թարմ մոտեցումներով լուծել խնդիրները, քան ծերերն ու արհեստավարժները, ովքեր սպառել են իրենց, կանխատեսելի են և արդեն իսկ տվել են իրենց առավելագույնը, - արքան խոսում էր՝ հայացքն ուղղելով դահլիճի հակառակ կողմում ամբոխի մեջ ծվարած մեկին, - առաջնորդի կարևոր հատկանիշներից մեկը ենթակաների տաղանդը նկատելն ու այն չանտեսելն է: Բոլոր նրանք, ովքեր նվիրված են ինձ, կգնահատվեն:

Նա, ում հայացքով հետևում էր Բելը, դարբին Վելվելի որդի Գիդոնն էր: Նա երիտասարդ էր, մարմնեղ, ծանրակշիռ ու դաժան, ինչպես նաև ամեն կերպ հասնում էր դրված նպա-

տակին: Գիդոնն այն մեկն էր, ով կարողացել էր ծուղակի մեջ գցել հայոց Շիվինի զորահրամանատարին, գերի վերցնել ու գլխատել նրան: Գիդոնը երիտասարդ էր, սակայն շատերը սարսափում էին նրա դաժանությունից: Երիտասարդի հայրը հայտնի դարբին Վելվելն էր, ում ծեծած գեղակերտ զենքերի հետևից ամբողջ աշխարհից էին գալիս: Ասում էին, թե նրա պատրաստած զենքերից ավելի սուր ոչինչ աշխարհում չկա: Վելվելը, ինչպես և իր որդին, աստվածային շնորհով էին պսակված՝ մեկը պատրաստելու, իսկ մյուսը՝ սպանելու:

Բելը, ով նույն դարբնի կողմից պատրաստված, հազվագյուտ քարերով զարդարված և կատարյալ կռված մի սուր ուներ, որը արքաներին էր վայել, ոտքի կանգնելով՝ հանեց գոտկատեղից: Գլխի մի շարժումից Գիդոնը հասկացավ, որ պետք է մոտենա արքային: Նեբրովթյան Բելը, երիտասարդին հանձնելով սուրը, նրան կարգեց աշխարհակալ բանակի հրամանատար.

- Որոնի՛ր թշնամուդ, ինչպես սավառնող արծիվն իր զոհին, ու թող քո զենքը կտրուկ հարվածով տապալի բոլոր թշնամիներիդ, ինչպես արծիվն է ճանկում իր որսը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ
ՑՈՒՅՑ ԿՏԱ ԻՐ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Գիդոնի՝ զորահրամանատար նշանակվելու մասին բոլորն իմացան: Լուրը հասել էր նաև Հայկ արքային: Այնպես, ինչպես Բելը՝ Հայկը նույնպես զորահրամանատար չուներ ու այնպես, ինչպես Բելը՝ Հայկ արքան երկար մտածում էր, թե ում պետք է զորահրամանատար կարգի:

Այդ օրն արքան իր մոտ կանչեց Միհր իշխանիկին: Վերջինս անորոշությունից տանջվում էր, իր արարքն անհետևանք էր մնացել, ուստի առանց վարանելու նրա մոտ եկավ: Ապարանքում Միհրին արագ ուղեկցեցին արքայի մոտ: Մինչ այդ մարտական տրամադրված Միհրը, Հայկ արքային տեսնելով փոխվեց ու իր կամքից անկախ ծնկի եկավ.

- Խնդրում եմ ներել ինձ, արքա՛: Ինձ համար դժվար է մաքուր պահել միտքս, երբ սիրտս պատռվում է:

Դրախտի արքան բազմած էր գահին: Հայկը փառավոր էր: Նա դունչը հենել էր բռունցքին ու մտքում պատկերներ էր պտտում: Աթոռին հենվելով՝ արքան ոտքի կանգնեց, մոտեցավ Միհր իշխանիկին ու նրան բարձրացրեց.

- Քո հայրը նշանավոր էր: Նրա մահն ինձ երբեք հանգիստ չի տա, Մի՛հր: Սակայն ես կուզեի ընկնել այնպես, ինչպես ընկավ Շիվինին: Նա իմ ավագ ընկերն էր, զգոն ու քաջագործ զինվորական: Շիվինին հոգ էր տանում իր բոլոր ռազմիկներին, գիշեր-ցերեկ մտածում հայրենիքի մասին, կռվում էր առաջին շարքում, հարձակվում բոլորից առաջ:

Ի՞նչ ես կարծում, Մի՛հր, - արքան շարունակեց կարճ դադարից հետո, - արդյո՞ք ես վրեժ չեմ տենչում:

Հոր մահից հետո Միհրի աչքերից թախիծը դուրս չէր գալիս: Նրա հոգին մթագնել էր, միտքը՝ խավարել: Երբեմնի կենսախինդ տղան, ով միշտ ժպտում էր՝ ատում էր աշխարհը, որովհետև կորցրել էր այն, ինչն իրեն ստիպում էր սիրել:

- Հա՛յկ արքա, իրավամբ ճշմարիտ են Ձեր խոսքերը, սակայն Շիվինին ամեն ինչից առաջ իմ հայրն է, - վերջին խոսքերը Միհրի շուրթերից կիսատ դուրս թռան: Երիտասարդը չկարողացավ զսպել հույզերն ու արցունքոտվեց, ապա ամոթից թևքով մաքրեց աչքերը:

Հայկը Միհրի ձեռքից բռնեց, ուղեկցեց դեպի իր գահն ու իշխանիկին իր կողքին տեղավորեց.

- Մի՞թե Մուբարակի սպանությունը թեթևացրեց սուգդ, թե՞ խորացրեց այն, Մի՛հր, - արքան զգուշորեն էր խոսում, քանի որ չէր ուզում վերքերն ավելի բորոբոքել:

- Երկար ժամանակ է անցել, բայց ոչինչ չի թեթևացնում սուգս, արքա՛: Կարծում էի, թե դրանով ինձ ավելի լավ կզգամ: Իսկ հիմա համոզված եմ, որ Մուբարակը, Բելն ու նրա ամբողջ աշխարհակալությունը դրան են արժանի: Ես երազում եմ գլխատել բոլորին: Պատրաստ եմ ամբողջ երկիրը հրի մատնել՝ ի պատիվ ու ի վրեժ իմ հոր: Ես ուզում եմ, որ նրանք բոլորը, ովքեր տոնում էին հորս մահը, զգան այն ցավը, որը ես եմ զգում: Հայկ արքան չկարողացավ զսպել իրեն ու ծիծաղեց.

- Ուզո՞ւմ ես հրի մատնել այն աշխարհակալությունը, որն աշխահին է տիրում, հրի՞ մատնել բոլոր նրանց, ովքեր

մեղավոր են հորդ մահվան համար: Սա պատերազմ է, Մի՛հր, իսկ քո հայրը՝ ռազմիկ էր, ոչ թե ձիապան: Մի՛ թող, որ ցավը պատի հոգիդ, այլապես չես գտնի հետդարձի ճամփան: Մի՞թե Բելին ու նրա աշխարհակալությունն այրելը հետ կբերի հորդ, թե՞ քեզ խելագար կդարձնի: Գիտե՞ս արդյոք, որ Մուբարակի կինը, ում ամուսնուն դու բոլորի առաջ գլխատեցիր, հիմա այրի է, իսկ նրա երեխաները՝ որբեր: Մի՞թե նրա զավակների որբությունը հորդ հետ կբերեն, Մի՞հր: Ի՞նչով են տարբերվում Մուբարակի որբերը քեզնից կամ ի՞նչով կտարբերվեմ ես Բելից, եթե թույլ տամ քեզ հրի մատնել նրա ամբողջ երկիրը:

Միհրը լռում էր: Նա չգիտեր, թե ինչ խոսեր: Հոր արժանի զավակը լինելով՝ նա հասցրել էր հորից սովորել այն ամենն, ինչ անհրաժեշտ էր հրաշալի ռազմիկ ու զորահրամանատար լինելու համար, սակայն ցավը պատել էր տղայի գիտակցությանը: Նրան օգնություն էր անհրաժեշտ.

- Տղամարդը պետք է իրեն հավասարակշիռ ու շրջահայաց պահի, նրա աչքերը պետք է հանգստությունով լցված լինեն՝ անկախ նրանից, թե ինչ է կատարվում նրա հոգում և անկախ նրանից, թե ինչ է կատարվում նրա շրջապատում, տղամարդը միշտ պետք է պահպանի իր արդարամտությունը: Աշխարհը լի է չարագործ, նենգ ու պիղծ մարդկանցով, սակայն դա միշտ էլ այդպես կլինի: Թշնամուն հաճախ անհրաժեշտ է ներել, որովհետև ցավով չէ, որ ցավը կարելի է բուժել: Գնա՛ ու սթափեցրու խոհերդ, Մի՛հր, քանզի այսօրվանից դու ես մեր զորքերի հրամանատարը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ
ԵՐԲ ԳԻՏԵՍ ԲԱՅՑ ՉԵՍ ՍՊԱՍՈՒՄ

Դրախտի երկրում բոլորն էին խոսում սպասվող պատերազմի մասին: Ամեն տանը, ամեն արհեստանոցում, ամեն բակում ու պատի տակ խոսում էին մոտալուտ ավարտի, արյունահեղ պատերազմի, Բելի հզոր բանակի, տեղի ունեցած իրադարձությունների, ստրկության ու մահվան մասին: Շատերն անհանգստացած էին, շատերը՝ բարկացած, շատերը՝ վախեցած: Շատերը քննադատում էին, շատերը՝ ոգևորվում, շատերը՝ պատմություններ հորինում, շատերը՝ վերլուծում, իսկ երկրի իշխանավորները արքայի հետ հանդիպում էին խնդրում:

Չնայած օդում թևածող բազմաշատ տրամադրություններին, Հայկը զուսպ էր, քանի որ գիտեր իր անելիքը: Նա իր առանձնասենյակում սպասում էր իշխանավորների հետ նախատեսված հանդիպմանը: «Եթե պետք է կռվել, ուրեմն մինչև վերջ», - մտածում էր արքան:

- Ի՞նչ են պատրաստվում ասել իշխանավորները: Արդյո՞ք նրանք վախեցած են պատերազմից: Արքայի ու իր նախնիների հովանավորությամբ նրանցից յուրաքանչյուրը երկար տարիներ վայելել է իր տոհմական կալվածքները, քաղել խաղաղության ու բարեկեցության պտուղները, ստեղծել ու արարել: Մի՞թե պատերազմի վտանգից նրանք կփոխվեն: Մի՞թե պատերազմը կստիպի կամազրկվել: Մի՞թե հեշտ կյանքը թուլացրել է նրանց: Դարերով երկրի վրա քայլող

տոհմական ազնվազարմ իշխանավորները պետք է հանդիպեին արքային:

Խոհարարը ներս մտավ: Նա առանց պատվերի գինի էր բերել թագավորին.

- Արքա՛, մտածեցի, որ մի քիչ գինին չի խանգարի Ձեզ խորհել:

Հայկը վերջերս մտածում էր խմելու սովորությունն ինչ-որ նոր բանով փոխարինելու մասին: Գինին արդեն ծանձրացնում էր, սակայն այդ մասին մտածելուն դեռևս բավական ժամանակ չէր հատկացվել, ուստի և անհրաժեշտ որոշում չէր կայացրել: Արքան նայեց խոհարարին ու նրա հայացքում ինչ-որ ծպտված տարօրինակություն նկատեց: Թեև խոհարարի կողմից առանց պատվերի հյուրասիրությունները սովորական էին, այնուամենայնիվ նրա աչքերում վանող անվստահություն էր երանգավորվում: Արքան երբեք խոհարարի հետ երկար զրույցի չէր բռնվում, ավելորդ բառեր չէր փոխանակում, ուստի և ծանր խոհերը արագ փոխարինեցին անհիմն տպավորություններին:

Խոհարարը գինին մրգերի հետ սեղանին թողեց ու դուրս եկավ: «Ի՞նչ է կատարվում հետս», - ինքն իր անհիմն կասկածների վրա զարմացավ արքան ու չորացած կոկորդը թրջելու համար մի կում արեց հենց նոր բերված գինուց: Ձեռքի բաժակը սեղանին դնելուն պես կոկորդում թեթև ծակծկոցներ սկսվեցին: Հայկը փորձեց շունչ քաշել, սակայն նկատեց, որ օդը հազիվ է թոքեր հասնում: Ծակծկոցները վայրկենաբար կտրող ցավի վերածվեցին ու սկսեցին խոցել ներսից: Արքան արագ ոտքի կանգնեց ու նկատեց, թե ինչպես է

շունչը կտրվում, իսկ սրտխփոցն՝ արագանում: Ավելի մեծ ծավալով օդ ներշնչելու փորձերը ձախողվում էին ու վիճակն ավելի էր բարդանում: «Գինի՞ն: Մի՞թե թունավորվել եմ», - մթագնող գիտակցությունը դղրդացող տագնապով լցվեց: Հայկը, շնչահեղձ լինելով, սեղանին շուռ տվեց գինին ու տեսավ, թե ինչպես է դրա երանգավորումը տարբերվում սովորականից: Արքայի մոտ սրտխառնոց ու թեթև ջղաձգություն սկսվեց: Նա երկու մատները մտցրեց մինչև կոկորդ՝ փսխոց առաջացնելու նպատակով, ինչն արագ հաջողվեց, ապա փորձեց ինչ-որ ձայն հանել, ինչ-որ մեկին ներս կանչել, սակայն ապարդյուն՝ թագավորին թունավորել էին, նա շնչահեղձ էր լինում: «Սա՞ է վերջը», - տագնապախառն մտքերն արագ փոխում էին իրար, - «մի՞թե հենց այսպես եմ մեռնելու: Մի՞թե այսքան պարզ ու այսքան վաղ», - իրար հերթ չտալով՝ շարունակվում էին, - «ի՞նչ էի արել խոհարարին»:

Տապալող գլխապտույտը Հայկին համարյա թե գետնին էր փռելու, երբ նա հավաքեց ուժերն ու օրորվելով շարժվեց դեպի դուռը: Նպատակին հասնելուն քիչ էր մնացել: Մինչև վերջ չփակված դուռը անակնկալ բացվեց: Մթագնող պատկերը հազիվ էր գիտակցելի. դռան հետևում պահ մտած խոհարարն արքայի առաջ դուրս թռավ, ով, հսկա դանակը ձեռքին, չպետք է թույլ տար թագավորին դուրս գալ սենյակից: Խոհարարի՝ առաջին հարվածից դանակը քիչ էր մնում արքայի պարանոցը մխրճվեր, որից վերջինս չհասկացավ էլ, թե ինչպես խուսափեց: Գուցե նրան հաջողվեց գլուխը հարվածից փախցնել, կամ գուցե ձեռքով կասեցրեց սուրացող հարվածը: Ոչ ոք երբեք չի իմանա դրա մասին, քանի որ արքան

ընդամենը ձախ կողմից փչող քամի զգաց, գլխի թագը մի կողմ շպրտվեց, մարմինը հակառակ կողմ նետեց ու, մեջքի վրա գետնին ընկնելով, արմունկներով սկսեց սողալ դեպի պատշգամբը: Խոհարարի հարձակումն ու հարվածները դրանով չավարտվեցին: Արքան փորձում էր ինչ-որ ձայն հանել, սակայն դեռ չէր ստացվում շնչել, ուր մնաց խոսել: Նրան միայն հաջողվում էր գետնին սողալու հետ մեկտեղ թուլացած ոտքերով հարվածներ ուղղել խոհարարին՝ այդպիսով հարվածները հեռացնելով իրենից, սակայն կատաղած հարձակվողը մեկը մյուսի հետևից դանակահարում էր արքային: Արդեն յոթ խորը հարված էր հասցվել Հայկի երկու ոտքերին, երբ նրանք արդեն պատշգամբի բաց դռան մոտ էին պայքարում:

«Աստղիկը», - արքան գրեթե ուշագնաց վիճակում տեսավ աղջկա արագաշարժ կերպարանքը, ով ճարպկորեն խոհարարի կողքին հայտնվեց ու, ընթացքից թափ հավաքելով, ինչքան ուժ ուներ այնպես մի կողմ հրեց դավադիրին, որ վերջինս ոչ միայն հայտնվեց պատշգամբում, այլև ոտքերի՝ ճաղերին հարվածի հետևանքով կորցրեց հավասարակշռությունն ու հազիվ հասկանալով, թե ինչ է կատարվում, ազատ անկման մեջ հայտնվեց: Ապարանքի երրորդ հարկից գետնին ընկնելը, հնարավոր է, որ չսպաներ խոհարարին, եթե պինդ բռնած միս կտրելու դանակը գետնին հարվածի հետևանքով չմխրճվեր նրա որովայնը: Հետագայում պարզվեց, որ խոհարարի դավաճանությունը գերության մեջ գտնվող եղբորը փրկելու պատճառով էր:

Դրախտի երկիրն ու ամբողջ աշխարհն այդ պահին արքունիքում ծառայող թույլիկ աղջկա ձեռքին էին: Աստղիկն այլևս ոչնչի ուշադրություն չդարձրեց, սիրտը պատռելով՝ հասավ արքային, նրա թիկունքը հենեց պատին, արագ ջուր բերեց, մի կերպ խմեցրեց թունավորվածին, ով կրկին փսխեց ու մի փոքր վերականգնեց շնչառությունը, ապա աղջիկը դուրս թռավ սենյակից ու մի քանի հոգու հետ ներս մտավ, սակայն գունազրկված արքան, ում միշտ անհանգստացրել էր թունավորվելու վտանգը, գիտակցությունը կորցրած, ամբողջովին արյան մեջ թաթախված, ձախ ուսով թեքվել էր գետնին ու չէր շարժվում:

Հայկն աչքերը բացեց: Աստղիկն ամբողջ գիշեր արքայից ոչ մի քայլ հեռու չէր գնացել: Արքայի արթնանալը տեսնելուն պես խեղճ աղջկա արցունքներից ուռած աչքերը զվարթացան ու սկսեցին պսպղալ: Նա, չկարողանալով զսպել իրեն, առաջ մղվեց ու արցունքախառը փաթաթվեց արքայի պարանոցին:

Անկողնում հայտնված Հայկը շրջապատված էր իշխանավորներով: Նրանց հայացքները ամբողջ գիշեր ուղղված էին եղել իրենց թագավորին հսկելուն, և ում գիտակցության վերադառնալը նրանց բոլորին թեթևացնող երջանկություն պարգևեց:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԸ

Միհրի ձայնը շատ հեռվից էր լսելի: Երիտասարդ զորահրամանատարը ժամանակ չէր կորցնում: Նա սահմանագծին էր ու պաշտպանություն էր պատրաստում: - Զբաղեցրե՛ք բարձրունքները, - արդեն խզված ձայնով բղավում էր հրամանատարը: Երկրի արևմտյան սահմանները պետք է ամուր լինեին, քանի որ լայնածավալ հարձակումն ամեն րոպե սպասելի էր:

Օրերը փոխում էին միմյանց, իսկ գիշերները՝ գնալով ավելի մթին ու ավելի վտանգավոր դառնում: Սահմանագիծը լարված էր: Դարանակալած թշնամին վերջերս հաճախ էր վնասարարություններ կազմակերպում: Գիդոնի հրամանով փոքր ստորաբաժանումներ էին ձևավորվել, որոնք անակնկալ ու ճեղքող հարձակումներով փորձում էին սահմանագծի թույլ կետերը բացահայտել: Ընդամենը մի քանի օր առաջ Գիդոնին հաջողվել էր օգտվել ջոկատներից մեկի անուշադրությունից, անսպասելի անցնել սահմանն ու գրավել կարևոր բարձունքը: Արդյունքում մի քանի տասնյակ ռազմիկ կոտորվել էր անկողնում՝ մեկի անզգուշության պատճառով, այդպես էլ չիմանալով, թե ինչ է կատարվել:

Միհրի պատասխանատվությունն արքայի՝ անկողնում հայտնվելուց հետո ավելի էր մեծացել: Ոչ միայն արքան, այլև Դրախտի երկրի ամբողջ բնակչությունը զորահրամանատարի պաշտպանությանն էին ապավինում, ուստի երիտասարդն իրեն չէր խնայում: Նա օր ու գիշեր մի դիրքից մյուսն էր անց-

նում, անհրաժեշտ հրահանգներ տալիս, բարկանում, քաջալերում, վախեցնում ու պատժում: Ժամանակները բարդ էին, ուստի հանգիստ նստել հնարավոր չէր: Միհրը նվազագույն քնով էր բավարարվում, փորձում էր բոլոր կարևոր իրադարձությունների կենտրոնում լինել և հնարավորինս հետևել թշնամու զորքերի տեղաշարժին, որոնք մի քանի անգամ ավելի թվաշատ էին: Պաշտպանությունը դեռևս հաջողվում էր:

Լույսն արդեն բացվում էր: Խիտ մշուշը պատել էր շրջապատը: Հրամանատար Միհրը տեղեկություն էր ստացել, որ մի քանի օր է, ինչ այդ ուղղությամբ թշնամու զորքերի խոշոր կուտակումներ կան: Ուժեղ հարձակում էր նախապատրաստվում, ուստի քաջ ռազմիկը մտադիր էր արժանի հակահարված կազմակերպել՝ ի պատիվ արքայի, ով կազմակերպված դավադրությունից հազիվ էր փրկվել: Թեև Հայկը կազդուրվում էր, այնուամենայնիվ, երկրում որոշակի խուճապ էր սկսվել:

Միհրն իր տեղակալներով կանգնած էր սահմանագծից ոչ հեռու գտնվող ամրության դիտակետում: Մառախուղն այնքան խիտ էր, որ ոչ շատ հեռվում գտնվող ծառերը կարելի էր շփոթել մարդկանց հետ: Կասկածելի լռությունը Միհրին հանգիստ չէր տալիս: Զորահրամանատարը, աչքերը նեղացնելով, անցուդարձին էր հետևում, առավալագույնս լարել էր ուշադրությունը, երբ հեռահար հարվածը սուլոցով տապալեց հենց դիտակետից ոչ հեռու կանգնած զինվորներից մեկին:

- Թշնամին հարձակվու՛մ է, - գոռաց հրամանատարը, ավելի զգոն եղե՛ք:

Հարձակումը սկսվեց: Քիչ առաջվա խելագարության հասցնող լռությունը փոխվեց բոլոր կողմերից լսելի աղաղակներով, խուլ ճչոցներով, դղդրդոցներով ու որոտներով: Միհրին ոչինչ տեսանելի չէր: Նա չգիտեր, թե ինչ է կատարվում շուրջբոլորը: Հրամանատարը որոշեց ցած իջնել դիտակետից, սակայն տեղակալներն արագ առարկեցին այդ հապճեպ որոշմանը: Ինչ-որ բան հուշում էր, որ անհրաժեշտ է սահմանագծի երկայնքով ցրված զորքերը կենտրոնացնել հենց այն ամրության թիկունքում, որտեղ այդ պահին գտնվում էր Միհրը:

Հեռվում հազիվ նկատելի ճրագների խումբը ստիպեց Միհրին նման հրաման տալ: Տեղակալներից մի քանիսն արագ ցած իջան դիտակետից ու անցան հրամանը կատարելուն: Կարճ ժամանակ անց՝ բարձունքները զբաղեցնող ու կարևոր դիրքեր պաշտպանող զինվորներից բացի, մնացած բոլորը Միհրի հրամանով խմբվել էին: Մշուշը շարունակում էր շրջապատն անտեսանելի պահել, երբ Միհրն իջավ դիտակետից ու հրամայեց խմբված զորքերը երկու գնդի բաժանել, ապա, երկրորդի հրամանատարությունը ստանձնելով, որոշեց, իրենցից հարավ գտնվող բլուրները շրջանցելով, հայտնվել թշնամու թիկունքում:

Գիդոնը, ով տեղեկացված էր Միհրի՝ սահմանագծին մոտ գտնվելու մասին, որոշել էր անակնկալի բերել նրան: Լավագույն մարտիկներից կազմված թվաշատ գնդերն արագ խմբավորելով և կուրացնող մշուշից օգտվելով՝ հրամանատարը որոշել էր վճռական հարվածով ճեղքել թշնամու պաշտպանությունը և լայնածավալ հարձակման անցնել: Փոքրիկ

խմբերն հիմնական զորքից առաջ էին ուղարկվում: Այդպիսի ցրված հարձակումներ կազմակերպելով՝ Գիդոնը ստիպում էր հակառակորդի առանց այդ էլ քչաթիվ զորքերին ցրվել սահմանագծով և անկենտրոն պաշտպանություն իրականացնել: Վճռական հարձակման պահը մոտ էր, քան երբևէ: Դրախտի երկրի ամուր դիրքերը մեկը մյուսի հետևից ընկնում էին:

Այլևս չհամբերելով՝ Գիդոնը ծածուկ հարձակվելու հրաման տվեց ու զորքերի գլուխն անցած՝ սկսեց դանդաղ առաջ շարժվել: Եվս մի փոքր, ու Գիդոնի արնախում ջոկատներից կազմված հզորագույն գնդերը մոտենում էին Դրախտի երկրի սահմանագծին:

Երկու երկրների սահմանը, որ վարար գետով էր կիսվում, շատ մոտ էր: Մշուշը սկսեց դանդաղ ցրվել: Ի զարմանս Գիդոնի՝ հակառակորդի զորքերն արդեն իսկ անցել էին գետը: «Ի՞նչ է կատարվում», - զարմացավ զորահրամանատարը, երկար չմտածեց ու արդեն կործանիչ հարձակման վստահ հրաման տվեց: Պաշտպանվելու փոխարեն հակառակորդը նույնպես հարձակվեց: Անզուսպ զորքերը բախվեցին միմյանց, ու անխնա կոտորած սկսվեց: Գետինը դղրդում էր, լեռները՝ ճեղքվում, երկինքը՝ պատռվում: Ոչ մի նահանջող չկար, երկու կողմերի անհաշիվ քաջերը գետնին էին տապալվում: Բախումը դեռ շատ երկար կձգվեր, եթե քաջարի Միհրը զորքերի երկրորդ մասի գլուխն անցած, դուրս չգար թշնամու թիկունք:

Մինչ այդ աջ ու ձախ ավերող ու արյան մեջ ոտքից գլուխ կորած Գիդոնն, ով կոտորածի հաճույքից անզուսպ ճիչեր էր հանում, անակնկալ լրջացավ: Դեպի առաջնագիծ կենտրոնա-

ցած հուժկու հարձակումը թիկունքից վնասազերծվում էր: Մինչ Գիդոնը հակառակորդ զորքերի առաջին կեսին ոչնչացնելով էր տարված, Միհրը թիկունքից կոտրում էր թշնամու զորքերի ողնաշարը:

Հանուն անկողնում հայտնված Հայկ արքայի՝ թշնամուն պատռող Միհր զորահրամանատարը մոտենում էր Գիդոնին: Վերջինս հեռվից դիտում էր իր պարտության տեսարանը և ապշահարությունից չգիտեր, թե ինչ աներ: Քիչ առաջ կոտորածի հաճույքով տարված Գիդոնն արդեն մտածում էր նահանջի մասին:

Եվս մի քիչ, ու նահանջն էլ արդեն հնարավոր չէր լինի, քանի որ զորքերի մնացորդները կհայտնվեին ծուղակում: Ուրիշ ելք չունենալով՝ Գիդոնը նահանջի հրաման տվեց: Հակառակորդին թերագնահատելու հետևանքով պարտության մատնված Բելի զորահրամանատարը երկնքին անիծեց ու անտառներով փախուստի դիմեց:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ
ԴԱՌՆ Է

Ճակատամարտի պարտության մասին լուրը շատ արագ հասավ Բելին: Արքան չկարողացավ կատաղությունը զսպել ու սկսեց ջարդուփշուր անել սենյակում գտնվող ամեն ինչ, իսկ երբ իմացավ, որ Գիդոնը փախուստի է դիմել և նրան չի հաջողվում գտնել, հրամայեց՝ ինչ գնով էլ լինի հայտնաբերել դասալիք հրամանատարին, նրան ու նրա ամբողջ զարմին պատժել: Աշխարհի հզորագույն, ամենապատրաստված, լավագույնս զինված ջոկատներն ընկել էին՝ Բելի համբավի ու հեղինակության հետ, որն արդեն առաջվանը չէր լինի: Ենթակա պետությունները կարող էին օգտվել պարտության առիթից, ուստի պետք էր արագ գործել, պետք էր արագորեն վերականգնել կարգուկանոնը: Ամբողջ աշխարհակալությունը, որն ամրացված էր վախի ու անպարտելիության հիմքերով, կարող էր ցնցումների ենթարկվել: Բելն առանց այդ էլ բազում չարակամ ու չարախինդ թշնամիներով էր շրջապատված:

Առասպելական բանակը երկար տարիներ էր, ինչ պարտություն չէր կրել: Պարտության համն արդեն անծանոթ էր արքային, սակայն Միհրը ստիպեց հիշել մոռացված դառնությունը: Երկար ժամանակ իրեն ամբողջովին վստահ զգացող Բելը՝ օրվա վերջում մենակ էր, երբ հազիվ նկատելի վախով պարուրվեց: Զգացողությունն այնքան թույլ էր, որ հսկան հրաժարվում էր ինքն իրեն խոստովանել դրա գոյության մասին: Ինչպե՞ս կարելի էր պարտվել մի ճակատամարտում, որ-

տեղ պարտվել հնարավոր չէ: Առաջնորդի գործը պետք չէ վստահել կատարողին:

Բելն ինքն էր իրեն կերտել: Նրա մոտեցումները, դեռ շատ վաղուց, ձևավորվել էին բացառապես անձնական փորձի վրա: Արքան համոզված էր, որ մարդիկ ամենևին էլ ազատություն չեն տենչում, ինչքան էլ որ սիրում են խոսել դրա մասին: Մարդիկ սիրում են, երբ նրանց թելադրում են, թե ինչ անել՝ անկախության մշուշ ստեղծելով, սակայն ժամանակի ընթացքում նրանք ավելի ու ավելի են սկսում պահանջել, քանի որ ձանձրանում են ունեցածից ու տենչում ավելին: Բելը գիտեր, որ մարդիկ մոռանում են, թե ինչ է երախտագիտությունը, մարդիկ անկուշտ են, չարամիտ ու գոռոզ: Բոլոր նրանք, ովքեր շատ են սիրվում, սկսում են սովորել դրան, ավելին պահանջել ու մի օր՝ հոգնել դրանից, ինչքան էլ որ սերն անսահման լինի: Մարդիկ արժանի են պատժի, վախի ու ցավի, քան թե սիրո, քնքշանքի ու կարեկցանքի: Յուրաքանչյուրը, ով գիտի, թե ինչ է ցավը, վախենում է դրանից, սակայն այն մեկը, որ սիրված է՝ սիրո չափն անընդհատ փորձելու մոլուցքով է տարված, մինչև որ կկորցնի այն:

«Ես այնքա՛ն մոտ եմ իմ նպատակին», - մտածում էր Բելը: Ամբողջ կյանքը պատերազմների ու կոտորածների մեջ վատնած Բելն ամեն ինչ տեսել էր: Նա վախենում էր ոչ թե պարտվելուց, ստեղծածը կորցնելուց կամ մեռնելուց, այլ վախենում էր, որ սխալվել է: Արքան ամբողջ ընթացքում վստահ էր, որ հասնելու էր իր նպատակին: Ներքին զգացողությունը, իրեն շրջապատող ամեն ինչ ու ամեն բան իրեն մշտապես վստահեցրել էին, որ մի օր արքան հասնելու է իր երազան-

քին: Համաշխարհային կայսրությունն ու նոր աշխարհակարգն այնքան մոտ էին: Նպատակն արդեն կարելի էր զգալ: Արքան վախենում էր ոչ թե պարտությունից, այլ այն մտքից, որ իր ստեղծած համոզմունքներն ու գաղափարները կարող էին սխալ լինել: Բելը վախենում էր, որ ամբողջ կյանքում ինքն իրեն սխալ է քանդակել:

Հենց այս մտքերով էլ Բելը քուն մտավ: Անհանգիստ գիշերն անհանգիստ երազներ է բերում: Նա ամբողջ ընթացքում առաջ էր սլանում, վազում էր ու ցատկում, բոլորի հետ կռվում, բոլորին տապալում, մինչև որ այլևս ոչ մեկը չկար, ում հետ կարելի էր կռվել: Բելի վրա հարձակվելու փորձեր անող յուրաքանչյուր մեկը տապալված էր, սակայն դատարկության զգացողությունն այդպիսով ավելի խորն էր դառնում: Բելը հանկարծ ուժեղ քաղց ու ծարավ զգաց, սկսեց այս ու այն կողմ նայել, սակայն շուրջբոլորը ոչ ոք չկար, ով մի բաժակ ջուր կամ մի կտոր հաց կտար ու թույլ կտար պայքարից հետո հանգստանալ: Նա սկսեց այս ու այն կողմ նայել, գլուխն աջ ու ձախ անելով փնտրել, ու հասկացավ, որ ծովափին է:

Դեպի ջուրը վազելով՝ արքան փորձեց մի բուռ ջուր խմել, սակայն այն աղի էր: Կատաղությունից Բելն, ինչքան ուժ ուներ, ջրին հարվածեց, իսկ հետո՝ աչքի առաջ պարզվող ջրերում մի խոշոր ձուկ նկատեց: Այն լողալով հայտնվեց նրա ձեռքերի մեջ: Եվս մի վայրկյան, ու ձուկը նրա կերակուրը կդառնար: Արքային թվաց, թե նա բռնել է ձկանը, սակայն կանգնելուց հետո միայն տեսավ, որ իր ձեռքերում ոչինչ չկա: Կատաղած Բելը կրկին այս ու այն կողմ էր նայում, սակայն ոչինչ չէր փոխվել. բոլոր մեռածները դեռ անշարժ էին:

Անհանգստությունից վեր թռնելով՝ Բել արքան կողքին դրված ջուրը միանգամից կուլ տվեց ու դժվարությամբ հասկացավ, որ տեսածը երազ էր: Կատաղի մտքերով տարվելը քաղցի ու սովի զգացողությունը բթացրել էր:

Հանգստանալով ու երազը վերհիշելով արքան՝ հասկացավ, որ ոչ ոք իրեն հաց ու ջուր չի տալու և որոշեց հաջորդ ճակատամարտն անձամբ գլխավորել: Հաջորդ հրամանն ամբողջ բանակը հարձակման պատրաստելու մասին էր:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ
ԲՈԼՈՐ ԽԱՂԱՔԱՐՏԵՐԸ ԲԱՑԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Պալատական ծառայողներից մեկը թակեց Աստղիկի սենյակի դուռն ու թույլտվություն ստանալուց հետո ներս մտավ: Ողջունելով՝ տարեց կինն աղջկան մի կնքված գրվածք փոխանցեց, որը հրամայված էր անձամբ Աստղիկի ձեռքը հանձնել: Այցելուն դեռ չէր հասցրել հեռանալ, երբ Աստղիկը բացեց գրվածքը.

Երբ իրիկնադեմի քնքուշ զեփյուռը մի դադար առնի ու
մեղմիկ սուլի,
Երբ նույն վայրկյանին արևից սնվող վարդերն էլ
բացվեն, սպասեն համբույրի,
Երբ սովից հյուծված վայրի գազանը՝ իր որսը
թողած, երկինք կհառնի,
Ամառվա տապին ուռին սնուցող գետը կանգ
կառնի, կդառնա հայելի:

Ժայռի ետևում վաղուց պահ մտած որսորդն իր
զենքը մի կողմ կնետի, խոր շունչ կքաշի,
Ծառի շվաքում ապաստան գտած եղնիկը քնքուշ
շարժումներ կանի, հեռուն կնայի,
Այս փուչ աշխարհին արևի շուրջը անթիվ
պտույտներ եթե կատարի՝
Երկինքը պատող աստղերն էլ մի օր հաստատ
կմարեն ու էլ չեն փայլի:

Եթե Աստված մի օր որոշի՝ երկինք ու երկիր
հրով շաղախի,
Ամեն ծառ ու թուփ, դաշտեր ու պարտեզ ոչինչ
դարձնի, վերածի մոխրի՝
Մեկ է՝ աշխարհը նույնն է ինձ համար,
նույնքան անթերի,
Քանի դեռ դու կաս, քո գեթ մի շնչով
կյանքը կմնա սիրուն արժանի:

Ու ուրիշ ոչինչ այնքան չի գերում,
որքան հայացքդ՝ լուսնին նայելիս,
Ամեն ինչից շատ կուզեի քեզ տեսնել ևս
մեկ անգամ տան կողմ քայլելիս,
Մթին գիշերվա անխոնջ լռության միայնության
մեջ ես քեզ կհիշեմ,
Սա միայն սկիզբն է, հիմա պատրաստ եմ՝
ամենն ինչ ունեմ, քեզ հետ կկիսեմ:

Հազար ու հազար դարերով ձգվող ժամանակն
հանկարծ կդառնա մի պահ,
Մի պահ, թե հազար՝ նույնն է ինձ համար:
Թե աշխարհ պատող միայնության մեջ դու լինես
կողքիս,
Մի պահ, թե հազար՝ պար կգա հոգիս:

Միհրի սխրագործությունների մասին իմանալով՝ Հայկ արքան ուղևորվել էր ռազմաճակատ, թեև դժվարությամբ էր

քայլում ու մինչև վերջ չէր կազդուրվել: Երկրի ղեկն այդ պահին մնացել էր երիտասարդ Արամին, ով արքային լրացնելու ազնիվ մղումով նստեց նրա գահին՝ բոլոր ներկաներին ի ցույց դնելով սպիավոր դեմքն ու կտրված ձեռքը:

Իսկ Աստղիկը փոխանցվածը մի քանի անգամ կարդալուց հետո արցունքոտվեց, խնամքով ծալեց այն ու ամուր սեղմեց կրծքին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ
ՎՃՌԱԿԱՆ ՊԱՀՆ Է ՈՐՈՇՈՒՄ

Բելը ճամբարում էր: Երկրի բոլոր կողմերում պահ մտած արնախում ռազմիկները, որոնց հետ արքան ամբողջ աշխարհը ոտքի տակ էր տվել, արքայի կանչով կրկին հավաքվում էին նրա կողքին: Հակառակորդներին արյան մեջ խեղդած դահիճները չէին հասցրել մոռանալ պատերազմի արնահամն ու ավարի գրավչությունը: Մարդասպան զենքերը կրկին դուրս էին բերվում պահոցներից ու անհրաժեշտ ձևով պատրաստվում: Զորքերը գնալով ավելի ու ավելի էին խմբվում, մինչև որ սկսում էին լեռները պատել: Անթիվ-անհամար վրանների ճրագները աստղազարդ երկնքի տակ բոցկլտում էին ճիշտ այնպես, ինչպես աստղերը: Երկրագունդը մինչ այդ երբեք այդպիսի թվաշատ բանակ չէր տեսել: Ցերեկվա ժամերին կազմակերպված մարզումներն արդեն իսկ ճակատամարտերը տպավորություն էին թողնում: Ջոկատների հրամանատարները շրջում էին զորքերի միջով ու անհրաժեշտ հրահանգներ տալիս: Այդպիսի բանակ դժվար էր հավաքել, էլ ուր մնաց՝ կառավարել կամ մատակարարում ապահովել: Բելի բանակին նաև վարձկաններ էին միանում, ովքեր, լսելով Դրախտի երկիր զենքով մտնելու գրավիչ առաջարկի մասին, առանց դանդաղելու խմբեր էին կազմում ու ռազմաճակատ ուղևորվում: Բելի բանակում աշխարհի բոլոր լեզուներով խոսող, բոլոր զենքերով կռվող, տարբեր սովորույթներ ու հավատալիքներ և մաշկի տարբեր երանգներ ունեցող տարատե-

սակ ռազմիկներ կային: Շատերի նպատակն ուղղակի սպանելն էր, և առանձնապես նշանակություն չուներ, թե ում:

Օրվա ընթացքում Բելը դուրս էր գալիս հատուկ կառուցված արքայական կացարանից, որն ուժեղ հսկողություն ուներ: Արքան շրջում էր զորքերի միջով, և նրան դուր էր գալիս իր բանակի բազմերանգությունը, քանի որ այն դժվարությամբ էր համախմբվելու իր դեմ: Առաջնորդը լավ էր գիտակցում այդ ամենի վտանգը: Շրջելով զորքերի միջով՝ Բելը համոզվում էր, որ իրենից բոլորը սարսափում են: Վերջին ճակատամարտի պարտության դառնությունն արքային ավելի սոսկալի ու ահեղ էր դարձրել: Քչերն էին համարձակվում անգամ նրա կողմը նայել: Նեբրովթյան հսկա Բելի ռազմական հագուկապը նույնպես տպավորիչ ու ազդեցիկ էր: Նրա հզոր բազուկները, շարժուն ու ինքնավստահ քայլվածքը չիմացողին արդեն իսկ մատնում էին, որ աստվածների որդի Բելն է գալիս:

Բելի ռազմաճակատ ժամանելուց հետո նրա զորքերն այնքան էին հավաքվել, որ արքայից շատ երկար ժամանակ կպահանջվեր ամբողջ բանակում շրջելու համար: Բարձունքին կառուցված կացարանից դուրս գալով ու երկրի բոլոր կողմերին նայելով՝ Բելն իր բանակի վերջը չէր տեսնում: Դրա բազմությունն ամբողջ հորիզոնը չորս կողմից պատել էր: Զորքին նայելը նման էր օվկիանոսին կենտրոնից նայելուն: Բելը գիտեր, որ երկար չպետք է սպասի, քանի որ նման զորքը պատրաստ պահելու ժամանակը ռեսուրսներ է պահանջում:

Դրախտի արքա Հայկը հասավ ռազմաճակատ, երբ զորահրամանատար Միհրն օգնականների հետ տարված էր ինչ-որ գործողությունների պլանավորմամբ: Հայկին տեսնելով՝ երիտասարդը երջանկացավ ու մեծ թեթևություն զգաց: Ընթացքի լարվածությունից ու անհանգստությունից երիտասարդը ծերացել էր, հասունացած մարդու տեսք էր ստացել: Նա՝ առանց անհրաժեշտ քնի ու հանգստի, առավոտից մինչև ուշ գիշեր լծված էր տարբեր տեսակի գործերով: Միհրն անում էր այն ամենն, ինչ կարող էր՝ ամրություն կառուցելուց մինչև հրահանգներ տալը: Թեև Հայկի բանակը քչաթիվ էր, այնուամենայնիվ բոլորն էին ցուցադրում իրենց առավելագույնը: Զինվորները գիտեին, որ պարտության գինը մեծ է լինելու: Դրախտի բանակը պարտվելու դեպքում կորցնելու էր ամենաթանկը:

Հայկն ու իր հավատարիմ զորահրամանատարը հանդիպեցին ու գրկախառնվեցին.

- Դու՛ հորդ արժանի որդին ես, Մի՛հր: Ամենն ինչ արել ես, ավելին է, քան աստվածները շնորհել են քեզ: Գնա՛ ու վայելի՛ր հանգիստ քունդ, վերականգնիր ուժերդ, քանի որ արքադ այստեղ է, իսկ վերջին կռիվը՝ շատ մոտ:

Արքան զորահրամանատարին իր կեցավայրը ճանապարհեց ու անցավ պաշտպանության գործը շարունակելուն: Բոլոր ջոկատների ու գնդերի հրամանատարներն անհրաժեշտ հրահանգներ էին ստանում: Արքան մոռացել էր, որ ռազմաճակատ արդեն իսկ վիրավորված վիճակում էր ժամանել:

Հայկի՝ անձամբ ռազմաճակատ գալուն հաջորդեց երկրի բոլոր իշխանավորների անձնական տրամադրության տակ գտնվող գնդերի ժամանումը՝ հենց իշխանների գլխավորությամբ: Տեղ հասած իշխանները ողջախոհ Հայկ արքայի մոտ էին մտնում, իրենց հավատարմությունն ու նվիրվածությունը հայտնում, մինչև մահ կռվելու երդումներ տալիս: Հայկի բանակին նաև երկրի հյուսիսային կողմերից ժամանած բազմաշատ ցեղերի ռազմիկները միացան, ովքեր նույնպես Բելին թշնամաբար էին վերաբերվում:

Գնալով կարճացող օրերը փոխում էին իրար: Բելի զորքերը պատրաստ էին, սակայն աստվածների որդին երկնքից նշանի էր սպասում: Բելի երկրի համար հազվադեպ պարզ երկինքը օրերով ձգվում էր, երբ մի առավոտ լիցքավորված ամպեր սկսեցին կուտակվել: Բելը ստացավ երկնային նշանը, երբ խիտ ամպերը անկանոն կայծակներով զինվեցին: Նա դուրս եկավ կացարանից ու հարձակման պատրաստվելու հրաման տվեց, ապա հագավ զրահները, վերցրեց զենքերն ու, զորքերի գլուխն անցնելով, անցավ գործի՝ նախապես ընտրված ուղղությամբ:

Դրախտի երկրի զորքերը նույնպես պատրաստ էին պաշտպանության: Երբ սահմանապահ դիտորդները թշնամու զորքերի տեղաշարժը նկատեցին, Հայկը նույնպես զգոնության կոչ արեց: Արքան բարձունքի դիտակետից տեսավ, թե ինչպես են Բելի զորքերն օվկիանոսի ալիքների նման պատում հսկա լեռներն ու անեզր դաշտերը: Մոտենալով միմյանց՝ երկու զորքերը բախվեցին: Դրանց միաձուլումով անզուսպ կոտորած սկսվեց: Ընկածների հաշիվը հնարավոր չէր

պահել: Դիակները կույտերի էին վերածվում, արյան հոսքը՝ առուների: Շուրջբոլորը դժոխային կրակ էր, աղաղակ ու դղրդոց: Քիչ էր մնում գետինը բացվեր ու բոլորին կուլ տար:

Աշխարհին տիրող բանակը դուրս էր եկել վերջին պատերազմին: Աղի լճի մոտ Բելն ինքնամոռաց այս ու այն կողմ էր վազում, ցատկում, բղավում, իր զինվորներին քաջքշում, ավելի ուժեղ հարձակման կոչեր անում, մտնում ամենաթեժ կռիվների մեջ ու հզոր հարվածներով տապալում բոլորին: Աջ ու ձախ ջարդող, ոչնչացնող ու վերացնող Բելն հորձանքով մոտենում էր իր նպատակին: Նրա մարմնով դող էր անցնում, հույզերը զսպելն արդեն անհնար էր: Դրախտի երկրի բանակը Բելի աչքի առաջ կոտորվում էր: Եվս մի քիչ ու ամբողջ աշխարհն իրենն էր:

Հայկ արքան, զորահրամանատար Միհրն ու իշխանները ևս մտել էին թեժ կռվի մեջ: Քաջերն ընկնում էին, սակայն չէին նահանջում: Թեև պայքարն անզուսպ էր, բայց պարտությունը զգացնել էր տալիս, երբ Միհրը Հայկ արքայի ուշադրությունն ուղղեց հեռվում ցլի պես մարտնչող Բելի վրա: Պաշտպանական զինամթերքն արդեն ավարտվում էր: Դրախտի արքան երիտասարդ Միհրի աչքերում հուսալքություն նկատեց, հայացք գցեց կայծակնավոր երկնքին, ձեռքը ձգեց իր հետ բերված որսորդական նետ ու աղեղին և, ոտքերի վերքերը շփելով, առաջ սլացավ:

Արագորեն բարձրանալով հարևան բլրի վրա՝ Հայկ աղեղնավորը նորից էր որոնում Բելին: Տեսադաշտում կռվող Նեբրովթյան Բելը հանկարծ անսովոր զգացումով խոցվեց,

մի պահ կանգ առավ, շուրջբոլորը նայեց, կրկին երկնքին դիմեց, սակայն պատասխան չստացավ:

Ամբողջ կյանքում թշնամիներին ոչնչացրած Բել արքայի բազուկները հրաժարվում էին կռվել: Պատերազմի որոշիչ պահն էր, մահը սավառնում էր շուրջբոլորը: Կար ժամանակ, երբ Բելը սիրում էր արդարությունը, քրքջում էր, նայում երկնքին ու երազում, իսկ հիմա, արքան երկնքին է նայում՝ միայն մահ բերելով: Նրա հոգին գնալով ավելի ծարավ ու ավելի սոված էր դառնում: Երկնքին նայելով Բելը վերջերս այցելած երազն էր հիշել, շփոթվել ու անշարժացել: Հսկայի աչքերը սկսեցին մեղմ ծակծկել, թեթև արցունքոտվեցին, որից հետո արքան սկսեց այլ կերպ տեսնել: Չորսբոլորը եռում էր քաոսի մեջ, իսկ Բելը՝ սառել խորհրդավոր ակնթարթում: «Ի՞նչ է կատարվում», - զարմացել էր արքան:

Երբ Դրախտի երկրի արքա Հայկ նահապետը հասկացավ, որ պահը եկել է, մինչև վերջ քաշեց լայնալիճ աղեղն ու նշան բռնեց: Եռաթև նետը պետք է սլաքվեր դեպի թշնամին: Այն երկնային կայծակի նման պիտի մխրճվեր Բելի կուրծքը և նրան ծնկի բերեր, սակայն հայացքով երկինք հառնած Բելը Հայկի հոգում ծանոթ զգացում արթնացրեց: Տեսարանը Հայկ արքային հիշեցրեց, թե ինչպես էր ինքն անիծում այն պահը, երբ ջուր խմող եղնիկին էր խոցել:

Դրախտի արքան կատաղությունից մինչև վերջ ձգած աղեղը շատ էր ուզում բաց թողնել, աղեղը ձգած բազուկները լարվածությունից դողում էին: Թվում էր, թե նետը արդեն բաց է թողնվել, ճախրում է, ու կարող է անարգել սլանալ դեպի թիրախը: Հայկն արդեն հաղթել էր, իսկ Բելը հեռվից նայելով

նետաձիգի կողմը՝ պարտվել և, կարծես, հանձնվել Հայկի կամքին: Երկու արքաները լուռ խոսում էին, զգացում կար, որ ամեն ինչ ավարտվել է:

«Միշտ չէ, որ թշնամուն սպանելով կհաղթես», - մի միտք սկսեց զրնգալ Հայկի գլխում, - «թշնամուն սպանելը թշնամանքը չի վերացնում, այլ ավելի է բորբոքում: Եթե ուզում ես հաղթել հակառակորդիդ, պետք է փոխես նրան, այլ ոչ՝ սպանես: Դա է իրական հաղթանակը»:

Վերջին ակնթարթում Բելի վրա ուղղված նետը Հայկ արքան իջեցրեց: Իսկ Բելը, որ շարունակում էր մնալ հույզերի խորքում, հասկացավ, թե ինչ է կատարվում, հասկացավ, որ չի կարող կռվել, հեռացավ մարտադաշտից, քաշվեց իր ապաստարանում, իսկ քիչ անց անակնկալ նահանջի հրաման տվեց: Նրանք այլևս երբեք առաջվանը չէին լինելու:

Երբ հարևան լեռան վրա ապաստանած քրմապետ Մաժանը նվիրյալ քրմերի հետ աղոթում էր իրենց աստվածներին՝ հանուն հաղթանակի, նկատեց, որ ամպերի հետևից սկսում է արև նշմարվել և հասկացավ, որ վտանգն անցել է: Հայկի զինվորները Միհրի գլխավորությամբ ավելի հուժկու հարձակման անցան ու զորքերի դեռևս չնահանջած մնացորդներին ստիպեցին ցրվել ու հեռանալ:

Երբեմնի զորավոր հրամանատար Բոազը, ով այդ պահին բանտում քնած էր ու երազ էր տեսնում, քնի մեջ ժպտաց ու հոգին տվեց: Աշխարհին տիրող անպարտելի բանակն այդ օրը պարտություն կրեց, Հայկի ու Բելի երկրներն այլևս երբեք չպատերազմեցին, աշխարհը խաղաղվեց, իսկ սավառնող վտանգն անհետացավ:

ԳԼՈՒԽ ՎԵՐՋԻՆ
ԴՐԱԽՏԻ ԱՐՔԱՆ

Աստղիկն ամբողջ օրը թախծոտ սրտով դուրս էր նայում իր սենյակի պատուհանից: Աղջիկն արքայի վերադարձի ճանապարհի ամեն մանրուք հասցրել էր ուսումնասիրել: Նրան ուրիշ ոչինչ այդքան հետաքրքիր չէր: Անսպասելի ձյուն սկսվեց: Հատ-հատ փաթիլները սկսեցին օրորվելով ներքև իջնել: Աստղիկին դուր էր գալիս, թե ինչպես են դրանք դիպչում իր՝ հիվանդությունից հրավառվող այտերին ու հալվում: Նա սկսեց խաղալ փաթիլվող ձյան հետ ու լեզվով բռնել դրանցից մի քանիսը:

Նույն օրը Հայկ արքան Միհրի ու իշխանների հետ մուտք գործեց ապարանք: Աստղիկը թողեց բոլոր գործերն ու աստիճանները հաշվելով՝ սլացավ ներքև: Հերոսներին դիմավորող ամբոխի մեջ սիրահարները հեռվից որսացին իրար հայացքները: Նրանց հարսանիքի օրը ոսկե անձրև ու մարգարիտներ էին տեղալու[5]:

Հեռու լեռների արնաբորբ սրտում, կապույտ երկնքի սավանի ներքո, փայլուն արևի շողով պարուրված մի երկիր կար՝ շատ վաղ անցյալում: Այստեղ բնակվող յուրաքանչյուր մարդու սիրտն ու հոգին կառավարում էր հզոր մի արքա: Եվ այդ արքային կոչում էին Հայկ, հսկաների որդի, ժողովրդի հայր ու թշնամու ահ:

Իսկ հեռվում՝ մահվանից էլ սև ծովերի ափին, խոնավ կանաչով ժայռերի վրա, ամպրոպ երկնքի ստվերի ներքո մի եր-

---

[5] Տե՛ս Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունում:

կիր կար, որտեղ արքան էր հսկա Բելը՝ աշխարհի տիրակալն ու երկնքի պատիժը: Նա կանգնած էր ժայռի գլխին, լսում էր քամուն ու զննում հեռուն:

РЕЗЮМЕ

КОРОЛЬ РАЯ

Аршак Нерсисян

Роман использует уникальный художественный прием для повествования о событиях, происходящих в древнем армянском царстве Страна Рая, основанных на героическом мифе о Айке и Беле. Противопоставление добра и зла, за которым следует война, раскрывается через новые философские подходы и оригинальные выражения мировоззрения, которые отражаются в ярких персонажах романа и их диалогах. Войны, независимо от победы, в конечном итоге приводят к поражению. С этой точки зрения глубокомысленные-философские обобщения автора имеют современный отклик. Этот роман является вторым произведением автора. Он читается с большим интересом и предназначен для широкой аудитории читателей.

SUMMARY

THE KING OF HEAVEN

Arshak Nersisyan

The novel uses a unique artistic technique to narrate events unfolding in the Kingdom of Heaven, an ancient Armenian kingdom, based on the hero myth of Hayk and Bel. The opposition between good and evil, which is followed by war, is revealed through philosophical new approaches and original expressions of worldview, which are reflected in the vivid characters of the novel and their dialogues. Wars, regardless of the victory, ultimately lead to defeat. From this perspective, the author's contemplative-philosophical generalizations have a contemporary resonance. This novel is the author's second work. It is read with great interest and is intended for a wide range of readers.

Բովանդակություն

ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ «ԴՐԱԽՏԻ ԱՐՔԱՆ» ՎԻՊԱԿԸ
ԿԱՄ «ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼԸ»՝ ՆՈՐՈՎԻ 3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԹՌՉՆԱԿՆԵՐԻ ԵՐԱՄԸ 12
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՄԻՇՏ ՊԵՏՔ Է ՓՆՏՐԻ 15
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԿՈՐԱԾ ԻՄԱՍՏ 18
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԹԱՔՆՎԱԾ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 22
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆԻՐԱԿԱՆ Է ԴԱՐՁՆՈՒՄ 26
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՈՒ ԳԱԼԻՍ Է ԱՆՊԱՍԵԼԻ 30
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՍԱԿԱՅՆ ՀԵՆՑ ԱՅԴՊԵՍ ԷԼ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՐ 36
ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ԱՆԿԱԽ ՔՈ ԿԱՄՔԻՑ ՃԱՄՓԱԴ ՍԿՍՎՈՒՄ Է 41
ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
ՍԻՐՈՂ ՍԻՐՏԸ 45
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ
ՑԱՎ Է ՊԱՏՃԱՌԵԼՈՒ 49
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ
ԻՆՉՊԵՍ ՄԻԱՅՆԱԿ ՎԱՐԴԸ ՇՔԵՂ ՊԱՐՏԵՋՈՒՄ 54
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ
ԱՅՆՊԵՍ ԷԼ ԱՐՔԱՆ ԲԱՋՄԱԾ ԻՐ ԳԱՀԻՆ 58

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ
ԱՐԺԱՆԻ ՄԵԿԸ 65
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ
ՑՈՒՅՑ ԿՏԱ ԻՐ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ 68
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ
ԵՐԲ ԳԻՏԵՍ ԲԱՅՑ ՉԵՍ ՍՊԱՍՈՒՄ 71
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԸ 76
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ
ԴԱՌՆ Է 81
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ
ԲՈԼՈՐ ԽԱՂԱՔԱՐՏԵՐԸ ԲԱՑԵԼՈՒՑ ՀԵՏՈ 85
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ
ՎՃՌԱԿԱՆ ՊԱՀՆ Է ՈՐՈՇՈՒՄ 88
ԳԼՈՒԽ ՎԵՐՋԻՆ
ԴՐԱԽՏԻ ԱՐՔԱՆ 95
ԲԵՅՈՄԵ 97
SUMMARY 98

ԱՐՇԱԿ ԱՇՈՏԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԴՐԱԽՏԻ
ԱՐՔԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Ստորագրված է տպագրության՝ 05.06.2025:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 6.375:
Տպաքանակը՝ 100: